

ՓԻԼՈՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՑՈՒ ԵՐԿԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ԼՈՒԾՄՈՒՆՔՆԵՐԸ

ՕՂԳԱ ՎԱՐԴԱԶԱՐԹԱՆ

Մեկնողական ընթերցանումները¹ վարող հայ վարդապետները XII դ. վերսկսում են աշխուժորեն հետաքրքրվել Փիլոն Ալեքսանդրացու երկերի մոտ յոթ դար առաջ կատարված հունարան հայերեն թարգմանություններով: Որպես այս չարունակ աճող հետաքրքրության ապացույց, պահպանվել են բաղմաթիվ լուծմունքներ (scholia), «պատճառներ» (causae, argumenta, hypotheseis), բառդրքեր (glossaria) և այլ նյութեր, որոնք հնարավորություն են ընձեռում ոչ միայն լուսարաններու «հայ փիլոնականի» ավանդման ընթացքի բաղմաթիվ կողմերը, այլև առհասարակ ուսումնասիրելու այն հնարները, որոնց միջոցով միջնադարյան հոգևոր դպրոցներում մշակվում և յուրացվում էին հին թարգմանական բնագրերը: Մինչդեռ այս չափազանց հետաքրքրական նյութը մնում է համարյա չհետազոտված: բացակայում է նույնիսկ դրա մատենագիտական քիչ թե շատ ճշգրիտ ցանկը, առանց որի անհնար է որոշել կատարվելիք աշխատանքների ծավալը և ուղղությունը: Սույն հոդվածով մենք փորձ ենք անում ինչոր չափով լրացնել այս բացը²: Նկարագրության համար ուսումնական մեկնությունների վերոհիշյալ տեսակներից ընտրվեցին Փիլոնի երկերին վերաբերող լուծմունքները՝ բացատրական վերապատռմները, քանի որ այս տեսակի մեկնությունները և՛ ամենածավալունն են, և՛ հաճախ հիմք են հանդիսանում «պատճառների» և բառդրքերի համար:

Խնդրո առարկա լուծմունքների ներկայացման առաջին փորձը նախաձեռնել է Գ.Գրիգորյանը³: Նրա համոզմամբ, «փիլոնական» լուծմունքները կազմում են երկու ժողովածու՝ «սարկավագյան» և «պլուզյան», որոնցից առաջինը գտնվում է երևանի Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի (այսուհետև՝ ՄՄ) № 59, 437, 1480 և 2595 մատյաններում, ընդ որում լրիվ կազմով՝ միայն վերջինում, իսկ երկրորդը՝ № 437, 1053, 2059 և 2379, ինչպես նաև երուսաղեմի երկու ձեռագրերում՝ № 172 և 318. երկրորդ շարքի բոլոր ձեռագրերը, բացի ՄՄ № 2379 և երուսաղեմի № 318, ներառնում են

¹ Օ. Վ. արդար արդյան. Մեկնողական ընթերցանությունները և Փիլոն Ալեքսանդրացու երկերի հայերեն մեկնությունները. – «Բանքեր երևանի համալսարանի», 2000, № 3, էջ 110–118:

² Փիլոնի աշխատություններին վերաբերող «պատճառների», ինչպես և «նախադրությունների» նկարագրությունը և բնագրերը հրապարակված են մենագրությամբ՝ Օ. Ս. Վարդազարյանի համար (Տեղական պատճենադրանություն, 2003):

³ Գ. Գրիգորյան. Փիլոն Ալեքսանդրացու աշխատությունների հայ մեկնությունները. – «Բանքեր Մատենադարանի», 1960, № 5, էջ 95–110:

լուծմունքներ ոչ միայն երկրորդ, այլև առաջին ժողովածուից: Ժողովածուների սկզբնական բաղկացությունը ներկայացվում է հետեւյալ ձևով⁴:

Ժողովածու Ա (Հովհաննես Սարկավագի հեղինակության վարկածը հիմնված է ՄՄ № 2595 լուծմունքների նախարանում գտնվող պատվիրատու՝ իսահակ եպիսկոպոսի կշռադատության վրա. «Արարեալ ի մերոց վարդապետաց, որպէս ցուցանէ կերպն շարագրութեան, այլ յումմէ գոլն անյայտ, զի չկայր յօրինակին անուն լուծողին: Բայց զի անկիւնաւոր թուրոց խրատն որ ի վերդ է, Սարկաւագ Յովհաննէս վարդապետն է արարեալ, եւ ես զայն ընդ սոյն գրոցս եւ սոյն դասութեամբ ի միւսում տփոջ դտի, վասն այն թուեցաւ ինձ, թէ եւ զայս լուծմունքս նա իցէ արարեալ, քանզի եւ բանն համանման երեւի նորին շարագրութեան: Այլ թէ ի նմանէ իցէ եւ թէ ոչ, սակայն մերոց վարդապետաց երեւի արարեալ»⁵: Այս կամ

Ժողովածու Բ (Հովհաննես Երգնկավագի Պուղի լուծմունքները).

Լուծմունքներ, վերաբերող
Prov, Anim, QG I-IV, QE, Spec,
Decal, Samson, Jona, Deo, Leg,
Abr, Contempl երկերին

Ա ժողովածուի՝ Հովհաննես Սարկավագի հեղինակության վարկածը հիմնված է ՄՄ № 2595 լուծմունքների նախարանում գտնվող պատվիրատու՝ իսահակ եպիսկոպոսի կշռադատության վրա. «Արարեալ ի մերոց վարդապետաց, որպէս ցուցանէ կերպն շարագրութեան, այլ յումմէ գոլն անյայտ, զի չկայր յօրինակին անուն լուծողին: Բայց զի անկիւնաւոր թուրոց խրատն որ ի վերդ է, Սարկաւագ Յովհաննէս վարդապետն է արարեալ, եւ ես զայն ընդ սոյն գրոցս եւ սոյն դասութեամբ ի միւսում տփոջ դտի, վասն այն թուեցաւ ինձ, թէ եւ զայս լուծմունքս նա իցէ արարեալ, քանզի եւ բանն համանման երեւի նորին շարագրութեան: Այլ թէ ի նմանէ իցէ եւ թէ ոչ, սակայն մերոց վարդապետաց երեւի արարեալ»⁵: Այս կամ

⁴ Հոդվածում փիլոնյան աշխատությունների խորագրերը ներկում են լատինական հապավումներով՝ միջազգային փիլոնագիտության մեջ ընդունված անվանակարգի համաձայն (տե՛ս, օրինակ, The Studia Philonica Annual. Studies in Hellenistic Judaism. Հոդվածների պարբերական ժողովածուն): Սոորոք բերվում է Հոդվածում օգտագործվող հապավումների ցուցակը՝ Հայերեն համարժեքներով: Փիլոնի երկերի Հայերեն թարգմանությունների խորագրերը բերվում են ըստ Հետեւյալ Հրատարակումների: Փիլոնի Եբրայեցւոյ բանք երեք չեւ ի լոյս ընծայեալք աշխատասիրութեամբ չ. Մկրտիչ Վրդ. Աւգերեանց, Վենետիկ, 1822, Փիլոնի Եբրայեցւոյ Մնացորդք ի Հայո, աշխատասիրութեամբ չ. Մկրտիչ Վրդ. Աւգերեանց, Վենետիկ, 1826, Փիլոնի Եբրայեցւոյ ձառք Թարգմանաւալք ի նախնեաց մերոց, որոց Հելլեն բնագիրք հասին առ մեզ. Վենետիկ, 1892: Փակագծերով հապավումները մացված են մեր կողմից վերլուծադրական միավորներն ավելի հարմար նկարագրելու համար:

Contempl	De vita contemplativa	Յաղագս Կարուց կենաց տեսականի
Abr	De Abrahamo	Կեանք իմաստնոց
Decal	De Decalogo	Յաղագս Տասնաբանեան օրինաց
Leg	Legum allegoriae I-II	Աստուածային օրինաց այլաբանութեան Ա' Բ'
Spec	De legibus specialibus	
(Spec Ia)	Spec I 79-81	Յաղագս քահանայից
	Spec I 131-161	Յաղագս երկոտասան ականց
(Spec Ib)	Spec I 285-345	Յաղագս բագնին իրաց
(Spec III)	Spec III 8-63	Յաղագս թէ ոչ շնայցես
Prov	De Providentia I-II	Յաղագս նախախնամութեան Ա' Բ'
Anim	De Animalibus	Յաղագս բան ունելլոյն եւ անասուն կենդանեաց
QG	Quaestiones et solutiones in Genesin I-IV	Այնոցիկ որ ի Լինելութեան խնդրոց եւ լուծմանց Ա'-Դ'
QE	Quaestiones et solutiones in Exodum I-II	Այնոցիկ որը յԵլից [խնդրոց եւ լուծմանց] Ա-Բ
Jona	De Jona	Յաղագս Յովնանու
Samp	De Sampson	Առանց պատրաստութեան ի Սամփսոն
Deo	De Deo	Յաղագս դԱստուած ի բարեգործութեան Հուրծանուանեալ

⁵ ՄՄ № 2595, թղ. 241թ:

այն երկը մշտապես ուղղեցող, կայուն բնագրային շրջապատն իրք կարևոր հանգամանք է, որը հաշվի է առնվում նաև ժամանակակից տեքստարանների կողմից բնագրի պատմությունը ճշտելու համար⁶, և գիտնական եպիսկոպոսի փաստարկը, անշուշտ, բավական ծանրակշիռ կիներ, եթե անկյունավոր թվերի աղյուսակը, որ կազմել է Հովհաննես Սարկավագը, իրոք, հանդիպեր միայն կամ բավական հաճախ այն լուծմունքների շրջապատում, որոնք գտնվում են իսահակ եպիսկոպոսի օրինակում։ Սակայն իրականությունն այլ է՝ անկյունավոր թվերի աղյուսակները չունեն մշտական բնագրային շրջապատ։ Դրանք զուգակցվում են և՛ Փիլոնի բնագրերով, և՛ նրա երկերի տարբեր տեսակի մեկնություններով, իսկ երբեմն հանդիպում են Փիլոնի հետ ամենեին չառնչվող նյութերի մեջ⁷։ Պետք է ասել, սակայն, որ իսահակ եպիսկոպոսն ինքը գիտակցում է փաստարկի թուլությունը, և բերում է այն միայն որպես ենթադրություն։

Բացի այդ, ինչպես ցույց է տվել Փ. Անթավյանը⁸, Գ.Գրիգորյանը սխալմամբ է համարել, որ ՄՄ № 2595-ի ստեղծողը, Բրաբիոն գրչուհին⁹, օգտագործել է երուսաղեմի № 333 մատյանի նախօրինակը, որը պետք է ստեղծված լիներ երուսաղեմի ձեռագրից շատ ավելի շուտ՝ XI-XII դդ.: Բրաբիոնն ասում է ճիշտ հակառակը՝ որ նա օգտվել է երուսաղեմյան մատյանի ուշ ընդորինակումից¹⁰: Քանի որ նախագաղաքարը՝ երուսաղեմի № 333 ձեռագիրը չի պարունակում որևէ լուծմունք, կարելի է ենթադրել, որ դրանք ավելացվել են Փիլոնի երկերի ժողովածուին հենց այս միջանկյալ օրինակում¹¹ կամ էլ քաղվել են իր իսկ՝ Բրաբիոնի կողմից ինչ-որ

⁶ Д. С. Лихачев. Текстология. На материале русской литературы X—XVII вв. М.—Л., 1962, с. 235—248.

⁷ Գ. Գրիգորյանի նշած ՄՄ № 437 և № 1480 ձեռագրերում (ինչպես կտեսնենք ստորև, «փիլոնյան» ուժմունքների տարրեր խմբերից հետո), «պատճառներից» հետո ՄՄ № 5254 ժողովածուում է այլ «պատճառներից» առաջ ՄՄ № 4150 ձեռագրում: Հովհաննես Սարկադիքի «անվյունագիր թվերի» աղյուսակների այլ ընդորինակությունների մասին տես Ա. Ա. բ. բ. ա. մ. յ. ա. ն. Հովհաննես Սարկադիքի մատենագրությունը. Երևան 1956, էջ 45-51 և Գ. Բ. Գ. ե տ ր ո ո յ ա ն. Մաթեմատիկան Հայաստանում հին և միջին գարերում. Երևան, 1959, էջ 132-155:

8. **Ф.** Ա ն թ ա պ յ ա ն. «Հովհաննես Սարկավագին վերագրված «Լուծմունք եօթնից դրոցն Փիլոնի» բնագրի առնչությամբ. – «Պատմա-բանասիրական Հանդես», 1983, №1, էջ 181–182:

⁹ Այս կին-ընդօրինակողը սերում էր կոստանդնուպոլսեցի հմուտ գրադրողների և թարգմանիչների տակմից։ Նրա ճեռաքով ընդօրինակվել է ևս երկու ճեռագիր, որոնք այժմ պահպանվում են Վիեննայի մատենադարանում (Վիեննայի № 436-ի մի մասը և № 461)։ Երկու հոգած գտնվող մի քանի մատոյան՝ ՄՄ № 377, 436, 1812, 2595, 2808, 2809, 2851, 4934։

10 УУ № 2595 ամենավերջում, լուծմունքներից հետո, Բրաբիոն գրչուհին ընդգրինակում է Վահրամ սարկավագի, Երուսաղեմի № 333-ի գրչի հիշատակարանը, սակայն իր սեփական հիշտատակարանի նույն տեղում (թղ. 280 ա) նշում է. «Հեղինակն մատենիս գաղափարնել էր ի գաղափարէ, ի յձնէ՝ (1298) Թուականի գրեցելոյ յԱրմենի անապատօն՝ Քայաց թուականն գաղափարնեցի մանն եւ անուն գաղափարողին ոս էր գրել»: Ուղեմն, Բրաբիոնն ընդգրինակել ի ինչ-որ միջանկալ գաղափարից, որը մեղ կամ չի հասել, կամ (գաղելի հավանական է) գեռևս չի հայտնաբերվել ամեն գեպօւմ, երուսաղեմյան ձեռագրի պահպանված ուշ ընդգրինակումներից և ոս մեկը չի հարմարվում Բրաբիոնի նկարագրությանը: Թիերև այս անհետացած օրինակը նրան տրվել է Գումարուի հոգեւոր գպացոցի հարուստ մատենադարանից: ի գեպ, այս գալրոցի սաներից էր ապագա կաթողիկոս Միքելոն Երևանցին՝ ՍՍ № 2595-ի պատվիրատու համակա եպիսկոպոսի ուսուցիչը (տե՛ս Փ. Ա ն - թ ա բ բ ա ն. Ամրառուց մինչ Սկյուտար-Գումար-Գաբրու. — «Արտօն», 1978, № 1-3, էջ 177-181, 264-265):

11 φ. Κυριακηγιανηροφενηνακ ΗΗΗ Ν 2595-η ζωμαρη απωλεωσηκποτιτ ζωλιαθηιαρη Ν 69 διεπωαθηηρη (ζηνζανηνησ υπρηκαθηαθηην βερραθηημαδ..., έθη 182): θαμπη, αμην βερραθηην

այլ ձեռագրից։ Ուստի, այս լուծմունքները Սարկավագի ժամանակով թվագրելու համար չկա և ոչ մի հիմք։ Ըստ Գ. Գրիգորյանի, նկատվում են նաև գաղափարային ընդհանրություններ լուծմունքների և Հովհաննես Սարկավագի բուն աշխատությունների միջև։ Սակայն ինչպես իրավացիուրեն դիտարկում է Փ. Անթապյանը, իրականում կարելի է խոսել թեև Սարկավագի աշխատություններից քաղած, բայց ոչ մի հեղինակային յուրահատկություն չունեցող՝ համատարած մտքերի մասին։ Մրանք, բացի այս, համադրվում էին ոչ թե վերլուծողին պատկանող, այլ Փիլոնի երկերից վերցված և վերապատման ենթարկված տեղերի հետ¹²։ Եվ վերջապես, Փ. Անթապյանը ցույց է տալիս, որ լեզվական հատկանիշներով լուծմունքները մերձենում են XIII–XIV դդ. Կիլիկիայի և Բարձր Հայքի հեղինակների լեզվին¹³, ընդ որում որպես terminus ante quem «առաջին ժողովածուի» երկու լուծմունքների համար¹⁴ կարելի է ընդունել ՄՄ №437 (ապելի ճիշտ՝ նրա մի մասի) բնդորինակման թվականը՝ 1282/3¹⁵:

Բ Ժողովածուն Հովհաննես Պլուզին է վերագրվում Վենետիկի № 1334 ձեռագրի հիշատակարանի հիման վրա, որն առաջին անգամ հրապարակել է Մշրտիչ Ավգերյանը⁶: Գ. Գրիգորյանը, սակայն, բերում է այս հիշատակարանը Գ. Զարբհանալյանի տեղեկագրից, որտեղ այն ծանոթագրվում է հետևյալ բառերով. «Երեքտասաներորդ գարու գրչագրի մը մէջ՝ յորում կան եւ լուծմունք գրոց Փիլոնի, հետեւալ հիշատակարան կը կարգանք...»¹⁷: Սակայն ոչ ինքը՝ Գ. Զարբհանալյանը, որը որոշ ժամանակ անց օգտագործել է վենետիկյան ձեռագիրը Փիլոնի ընագրերի հրատարա-

մատյանում հավաքված լուծմունքների նկարագրությունը ձեռադրացուցակում (Բ. Կ ի ւ ե ս է բ ե ա ն. Ցուցակ ձեռագրաց Ղալաթիոն ազգային Մատենադարանի. Անթիլիաս, 1961, էջ 475-484) չի բերվում, ուստի և զերչնական դատողությունը լուծմունքների նույն լինելու մասին առայժմ անհնարիք է: Բացի այդ, Ա. Տերյանը [P h i l o. Alexander vel de ratione quam habere etiam bruta animalia (De animalibus) e versione armeniaca. (Introduction, traduction et notes par A. Terian). Paris, 1988 (P h i l o ' D ' A l e x a n d r i e. Œuvres publiées sous le patronage de l'Université de Lyon. T. 36, p. 35)] թվադրում է Ղալաթիայի մատյանը 1791թ.: Եթե դա այդպիս է (ձեռադրացուցակում մատյանը թվադրված չէ), ապա մենք ստիպված կլինենք Հրաժարվելու Փ. Անթապյանի առաջարկից այն պատճառով, որ ՄՇ Նո 2595 ստեղծվել է ապիսի շուրջ 1786/78:.

¹² Փ. Ա ն թ ա պ ւ ա ն. Հովհաննես Սարկավագին վերագրված..., էջ 184-185:

¹³ Σπεῖρη στεղοεις ξ9 186-189:

¹⁴ *A1 B1, տե՛ս լուծմունքների նկարագրության բաժնում:*

¹⁶ Փիլոնի Երրայեցւոյ Մնացորդք..., էջ 622:

¹⁷ 9. Զ ա ր բ հ ա ն ա լ ե ա ն. Հայկական թարգմանութիւնք նախնեաց. Վենետիկ, 1889, էջ 744-745:

կության համար¹⁸, ոչ էլ ձեռագրին դիմելու առիթ ունեցող հետագա ուսումնասիրողները ոչինչ չեն հայտնում դրանում որևէ լուծմունքի առկայության մասին: Եվ, իրոք, վենետիկյան մատենադարանի նոր ձեռագրացուցակից¹⁹ պարզվում է, որ № 1334 ձեռագրում լուծմունքներ չկան կան միայն հատվածներ «Պատճառ Փիլոնի»-ից: Թեպես, եթե անդամ մեզ հետաքրքրող լուծմունքները գտնվեին այս մատյանում, դա բնավ չէր օգնի որոշելու դրանց հեղինակային պատկանելությունը: Ամենայն հավանականությամբ և՛ Գ. Զարբհանայանը, և՛ Գ. Գրիգորյանը պարզապես անուշադիր են կարդացել հիշատակարանը և դրան ուղեկցող Մ. Ավգերյանի ծանոթագրությունը. «C մատյանի մասին, որի գրվելու տարեթիվը նշված չէ, ասպում է, որ այն ստեղծվել է Վարդան քահանայի՝ բարունի Հովհաննես Եղնակայեցու աշակերտի կողմից: Այս վերջինն ապրում էր նույն դարում, և այս նույն անձը հիշատակվում է որպես Փիլոնի երկերի մեկնիչ. Թերևս խոսքն այն նույն Վերլուծողի (*Glossarius*) մասին է, որից մենք մի քանի անդամ մեջբերումներ կատարեցինք [այստեղ]՝ թիվում է, որ սա են նշանակում գրիչ Վարդանի թեե ոչ ստույգ խոսքերը»:²⁰ Անմիջապես հետո բերվում է հիշատակարանը. «...Մաղթանս աղաչանաց մատուցանեմք վերլուծողաց այսմ մատինի մեծ իմաստնոյն Փիլոնի. որք առ ի սմանէ աւգտութիւնս ինչ գտանէք, թողութիւն յանցանաց հայցեցէք յաստուծոյ յոքնին մաստ հոստորին որոյ անուն կոչի Յոհաննէս բարունի, եւ մականուն Եղնկայեցի եւ ամենայն արեան մերձաւորաց իւրոց: [Եւ իմոյ յանցանացն այլ հայցեցէք թողութիւնը]²¹ անարժան գծողիս, պիտականուն քահանայ Վարդան սպասաւոր բանի, [Եւ ծնողացն մերոց եւ ուսուցչացն]...»²²: Հիշատակարանում չկա և ոչ մի խոսք Հովհաննես Երդնկացու կողմից որևէ լուծմունք ստեղծելու մասին. հասկանալի է, որ «վերլուծողք» բառը նրան չի վերաբերում, և չի ենթադրում որևէ գրավոր լուծմունքի առկայությունը: Այս թեման ամփոփվում է Մ. Ավգերյանի՝ Վարդանի երկրորդ աղոթմանն²³ ուղեկցող դիտողությամբ. «Այլուստ պարզ երկում է, որ Վերլուծողն ավագ է Երգնկացուց, ինչպես նաև Վահրամից՝ ու Վասիլից»²⁴²⁵.

¹⁸ Փիլոնի Երրայեցւոյ Ճառք ...: Հրատարակչի անունը ճշտել է Ֆ. Զիգերտ. Der armenische Philo. Textbestand. Editionen. Forschungsgeschichte.– Zeitschrift für Kirchengeschichte, Bd. 100, 1989, Hft. 3, S. 354) Վենետիկի միաբանության հրապարակածք գուցակի օգնությամբ (Caza Editrice Armena: Catalogo delle publicationi. Venezia, S. Lazzaro, 1978, p.173):

¹⁹ Ս. Ճ և Ճ և Ճ և ա ն. Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Միաբանաց ի Վենետիկ, Հ. Ը, Վենետիկ, 1998, էջ 595–598 (№ 1669, ձեռ. № 1334, ԺԳ/ԺՃ ԴՂ):

²⁰ Փիլոնի Երրայեցւոյ Մնացորդք..., էջ 622:

²¹ Վերականգնվում է ըստ ձեռագրացուցակի:

²² Փիլոնի Երրայեցւոյ Մնացորդք..., էջ 622:

²³ «Ով սրբասնեալ ընթերցողք, որք օգտիք յայսմ աստուածայունչ տառից մեկնութենէ, յիշենքիք ի սուրբ յաղօթս ձեր զսրբասնեալ բարունիս մեր զթոհաննէս, եւ զանարժան գրիչս զՎարդան սպասաւոր բանի» (նույն սեղում): Մ. Ավգերյանի՝ նույն տեղում կատարած նշումը «աստուածայունչ տառից մեկնութենէ» արտահայտության վերաբերյալ («Փիլոնի կամ մեկնչի նորա») ակներև ավելորդ է: «Աստուածայունչ տառ»-ը Սուրբ Գիրքն է, իսկ դրա «մեկնութիւն»-ը՝ Փիլոնի մեկնողական երկերն են, և ոչ դրանց համար գրված լուծունքները:

²⁴ Երուսաղեմի № 333 ձեռագրի գրիչը:

²⁵ Վենետիկի № 1040 ձեռագրի գրիչը:

²⁶ Փիլոնի Երրայեցոց Մնացորդք..., էջ 622:

Այսպիսով, Մ. Ավգերյանը չի պնդում, որ իր կողմից օգտագործված մեկնությունը գտնվում է նույն ձեռագրում և կազմված է Հովհաննես Երգնկացու կողմից: Նա ընդամենը հայտնում է, որ այլ (ցավոք, չնշված) աղբյուրներում²⁷ այս հեղինակը հիշատակվում է որպես Փիլոնի երկերի մեկնիչ. դրանից հետո նա քննարկում է իր սեփական ենթադրությունը, թե իր կողմից օգտագործված «Glossarium»-ը հենց այն մեկնությունն է, որ այլ աղբյուրների վկայությամբ հեղինակել է ինչ-որ Հովհաննես Երգնկացի, և ինքը հերքում է այս վարկածը, քանի որ իրեն ծանոթ մեկնությունը, իր կարծիքով, ավելի վաղ է: Զար նաև ոչ մի հիմք պնդելու, որ հիշատակարանի «Թովհաննես Երգնկայեցին» անպայման Հովհաննես Երգնկացի Պլուզն է, քանզի փիլոնյան ընագրեր պարունակող մատյանների հիշատակարաններում նշվում են առնվազն ևս երկու համանուն անձինք՝ Հովհաննես Երգնկացի Շործորեցին²⁸ և Գլաճորի մյուս սանի՝ Կիրակոս Երգնկացու բարունապետի կրտսեր ազգակիցը՝ Հովհաննես Երգնկացին²⁹: Վերջապես, Հովհաննես Երգնկացի Պլուզի հեղինակությունը չի կարող հաստատել նաև առաջին դեմքից գրված արտահայտությունը «Թաղագս նախախնամության» երկին նվիրված լուծմունքում «Եւ ես Թովհան այսպէս պատասխանեմ քեզ, ո՞վ Աղեքսանդրէ»³⁰: Նախ, «Թովհան» անունն այնքան տարածված է եղել, որ դրա կիրառումն առհասարակ ոչինչ չի նշանակում: Բացի այդ, նույն անձի միջամտությունը նույն լուծմունքում ցույց է տալիս, որ նա լուծմունքների հեղինակը չէր, այլ ընդամենը լուծմունքների՝ սեփական օրինակի խմբագրողը: Հին վերլուծողի ծանոթագրությունից հետո³¹ («Պիթագորաս ասէ զթիւ՝ զթիւ այս չեմ ի գիտել») գալիս է հետևյալ ընդմիջարկությունը. «Բայց ես Յոհան գրիչս եւ ստացողս գրոցս զայս կարծեմ զթիւ Պիթագորա, զոր աւանդեաց աշակերտաց իւրոց, եթէ զմինն յորժամ կրկնես, լինի երկու, եւ աշխարհս զայս երկուց ստեղծեալ է նիւթոյ եւ արուեստից, եւ երկեակն ասեն լինի չորս, որովք ասէին, թէ յայս չորից եղեալ է աշխարհս»³²: Ցավոք, չկա և ոչ մի լրացուցիչ տեղեկություն ընդմիջարկության ժամանակը որոշելու համար. համենայնդեպս, լուծմունքի այլ օրինակներում, այդ թվում հնագույն՝ ՄՄ № 437 գլաճորյան ձեռագրում այս նշումը բացակայում է:

Ստիպված լինելով հրաժարվել Գ. Գրիգորյանի առաջարկած հեղինակություններից, մենք հարկադրված եղանք քննության ենթարկել «երկու ժողովածուների» մասին տեսությունը որպես այսպիսին: Այս խնդիրը լու-

²⁷ Մ. Ավգերյանն օգտագործել է ինչ-որ լուծմունքների հավաքածու, որը կրում է Ետառանիշը (Փիլոնի Երգայեցւոյ Մնացորդք..., էջ II): Այն անպայման պետք է պարունակեր A1 և C1 լուծմունքները, սակայն որ ձեռագրում է գտնվում այս հավաքածուն, մեզ չհաջողվեց իմանալ:

²⁸ Մենք հակված ենք մտածելու, որ Վենետիկի № 1334 ձեռագրի հին մասում հիշատակվող Հովհաննեսն ու Վարդանը հենց Հովհաննես Շործորեցին և նրա մտերիմ աշակերտ ու գործակից Վարդան Կիլիկեցին են:

²⁹ Տե՛ս ՄՄ № 2100 / 1318 թ., Շործորի վանք, գրիչ՝ Մխիթար, ստացող՝ Հովհաննես Երգնկացի, ՄՄ № 2102 / 1342 թ., գրիչ՝ Թորոս, ստացող՝ Հովհաննես վարդապետ:

³⁰ ՄՄ № 1053, թղ. 273ա, ՄՄ № 2059, թղ. 33ա, հմտ. Գ. Գ ը ի գ ո ր յ ա ն. նշվ. աշխ. էջ 104:

³¹ ՄՄ № 1053, թղ. 250ա:

³² Նույն տեղում:

ծելու համար պահանջվում էր նկարագրել «փիլոնական» լուծմունքների յուրաքանչյուր միավոր և ապա միայն դիտել, թե ինչպիսի համալիրներ են կազմում դրանք ձեռագիր մատյաններում:

Փիլոն Ալեքսանդրացու երկերի հայերեն թարգմանություններին վերաբերող լուծմունքների նկարագրությունը կատարվել է հետևյալ սկզբունքներով.

- Փիլոնյան երկերի հայերեն թարգմանությունների ամեն մի միավորին շնորհվում է լատինական տառանիշ: Փիլոնի երկերին տառանիշերը տրվում են այն հերթականությամբ, որով դասավորված են դրանց վերաբերող լուծմունքները ՄՄ № 2595. մատյանում:

- Թվային ցուցիչով տառանիշից հետո նշանակվում է համապատասխան երկին վերաբերող լուծմունքը: Ուստի, միևնույն երկին վերաբերող տարրեր լուծմունքները ստանում են միևնույն տառանիշը, բայց տարրեր թվային ցուցիչներ: Ցուցիչի նույնությունը տարրեր տառանիշերով նշված լուծմունքների դեպքում սովորաբար չի նշանակում այդ լուծմունքների որևէ կերպ ազդակից լինելը:

- Լուծմունքի ծածկանիշից (տառանիշ գումարած թվային ցուցիչ) հետո տրվում է լուծմունքի անվանումն ըստ ձեռագրերի տվյալների: Եթե անվանումը բացակայում է, դրվում է բազմակետ թեք քառակուսի փակագծերում:

- Լուծմունքի սկիզբն ու վերջը բերվում են առանց նախադրությունը հաշվի առնելու: Նախադրության առկայությունը նշվում է ամփոփիչ աղյուսակում «&c» նշանով, իսկ բնագիրը բերվում է հավելվածում, աղյուսակից առաջ:

- Սկիզբն ու վերջը բերվում են ըստ լուծմունքի ամբողջական բնադրի: Այս կամ այն ձեռագրում լուծմունքի թերի լինելու փաստը ծանոթագրվում է def(ectivum) նիշով համապատասխան ձեռագրաթղթերը նշելուց հետո:

- «Բ[այ]ն» և «լ[ու]ծ[ումն] նիշերը դրվում են ըստ բնագրի իրական տրոհման, անկախ դրանց առկայությունից ձեռագրային տարրերակներում:

- Ամփոփիչ աղյուսակը ցույց է տալիս, թե ինչ լուծմունքներ և ինչպիսի հերթականությամբ են գտնվում երևանյան ձեռագրերում:

- Արտասահմանյան ձեռագրապահոցներում գտնվող մատյանների տվյալները մեզ հետաքրքրող նկարագրությունների համառոտության և անորոշության պատճառով սույն մատենագրության մեջ հաշվի չեն առնվում:

- Ձեռագրային ուղղագրությունը հնարավորին չափ պահանջվում է, աղավաղված տեղերը նշվում են շղագրով:

Հուծմունք գրոց Փիլոնի

Prov

**A1(+B1)*³³

Յաղագս նախախնամութեան Փիլոնի առ
Աղեքսանդրոս

Սկիզբ. բն. Յորժամ յաղագս նախախնա-
մութեան. լծ. դու առաջի արկէր եւ ես
քննեցի իմաստութեամբ...

Վերջ. բն. եւ առանց զիւր եւ ածելոյ. լծ.
որ դու զիս չքարշես հետ քո առանց կամաց
եւ կամ ես զքեզ, այլ ըլորդ խօսինք :

ՄՄ № 59, թղ. 11ա-21ա: ՄՄ № 2595,
թղ. 242ա-248բ: ՄՄ № 437, թղ. 110բ -111բ:

**A2*

Հուծմունք նախախնամութեան Փիլոնի

Սկիզբ. բն. Յորժամ յաղագս նախախ-
նամութեան բանդ. լծ. այս է, զի բազումք
ի հեթանոսաց իմաստնոց...

Վերջ. բն. այլ վաղվաղակի այսրէն դամ.
լծ. վաղիւ առ քեզ գամ. զի ասասցես զյա-
լիտենական իմաստն. եւ եկն վաղիւն ա-
սաց, բայց չէ այն ի միջի. աւա՛ղ, որ չէ ի
միջի :

ՄՄ № 2059, թղ. 2ա-49բ: ՄՄ № 1053,
թղ. 246ա - 286բ: ՄՄ № 2379, թղ. 1ա -
60բ /Բան վերլուծական յաղագս նախախ-
նամութեան. այս չորս Փիլոնն է /: ՄՄ №
437, թղ. 153բ - 174բ: ՄՄ № 1480, թղ.
474ա - 496ա:

**A3*

Փիլոնի յաղագս նախախնամութեան առ
Աղեքսանդրոս

Սկիզբ. բն. Այդ հեռալի իմաստութիւն.
լծ. Այս է. Հակառակող եւ ինեռիւ լի իմաս-
տակը...

Վերջ. բն. զիւր եւ ածելոյ. լծ. թէ այս-
պիսի կամաւք զի մի յաղթասէրք լիցուք:

ՄՄ № 1672, թղ. 128ա-136ա:

**A4 (Հատակտոր)*

Ի նախախնամութեան գրոցն

Սկիզբ. բն. Քանզի բազում եւ որ ի վեր
ի վերոյ յածի: լծ. որ անկատարք են ան-
սկիզբ եւ անվախճան ասացին զաշխարհս ...

Վերջ. բն. Կիսագունդք յարմարին. լծ.
օք եւ հուր խառնին, եւ այս է որ լոյս ար-
ձակէ:

ՄՄ № 1480, թղ. 574ա:

Anim

**B1(+A1)*

[.....]

Սկիզբ. բն. Լուսիմաքոս. Քանզի ո՞վ -
պատուական Փիլոն, երից լծ. վասն գ'
պատճառի Աղեքսանդրու բանքն զիս առ
ինքենէ ի գգել...

Վերջ. բն. չէ պարտ ամբարշտելով
տժգոհ լինել լրնութենէս. զբանականու-
թիւն ... պարսաւանս արկանել ի վերայ ան-
ընդունացն (՝), այս չէ պատեհ:

ՄՄ № 59, թղ. 21ա-25ա:

Վերջ. բն. որ լսողքն կու լսեն միապէս,
զփողոյն եւ զանասնոցն չէն ի լսելիս միա-
պէս:

ՄՄ № 2595, թղ. 248բ-251ա: ՄՄ №
437, թղ. 114ա - 115բ(def):

**B2*

Փիլոն առ. Լուսիմաքոս Յաղագս բան
ունելոյ եւ անսառւն կենդանեացն

Սկիզբ. բն. Թիշեա զերեկեան բանսն.
լծ. ոչ թէ վասն նախախնամութեան բանին.
զի զայն յայլում ժամանակի խօսեցաւ...

Վերջ. բն. շնորհելով նոցա զբան(ս), որ
ոչ ունին անսառւնքն . զբան ի հոգի եւ ան-
տես է ի նոցա բնութիւն բանի:

ՄՄ № 1480, թղ. 496ա - 505բ: ՄՄ №
437, թղ. 175ա-183բ: ՄՄ № 1053, թղ.
286բ - 301ա: ՄՄ № 2059, թղ. 49բ - 67բ:
ՄՄ № 2379, թղ. 60բ - 97բ:

**B3*

[.....]

Սկիզբ. բն. զեղագս եւ զկաղաղս խնդ-
րել. լծ. աւրինակ տա թէ սովոր են որ-
սորգքն....

³³ *A1 և B1 հուծմունքները, թեև վերաբե-
րում են փիլոնյան երկու տարբեր աշխա-
տություններին, իրականում կազմում են
մեկ միասնական մեկնություն:*

Վերջ. բն. Առ. բախող արարսդ աւրի-
նակ տա զգործիս գուսանաց սակաւ տարա-
ցոյց:

ՄՄ № 1672, թղ. 136ա – 139ա:

QG I – III

*C1

[.....]

Սկիզբ. բն. Զյորժամ եղեն ոչ յայտ-
նեաց. լծ. եւ այս ի յամօթ այնոցիկ, որ ի շ
տարին ասեն լինել զախարհս եւ այլք ի
Ռ’...

Վերջ. բն. այլեւ զերեք ամենայնի մա-
տուցէին պատարագ ի սեղանն:

ՄՄ № 59, թղ. 33բ – 42ա [Փիլոնի վասն
Ծննդեան դրոցն լուծմունք]: ՄՄ № 2595,
թղ. 251ր – 257ր:

*C2

Լուծմունք Ծննդոց գրոց

Սկիզբ. բն. Զանմարմին տեսակսն. լծ.
յաղագս սոցա, այս է յաղագս սասացելոցա,
թէ արար յառաջ քան զինելն, զանմարմին
տեսակսն առակչ...

Վերջ. բն. նշանակ ձեւացոյց. զի այն-
պէս թլփատեսցին եւ մնասցեն անթլփատ:

ՄՄ № 437, թղ. 202ր – 227ր: ՄՄ №
1480, թղ. 523ա – 545ա: ՄՄ № 2059, թղ.
172ա – 216ր: ՄՄ № 1053, թղ. 391ա –
395ա (def):

QE I – II

*D

Լուծմունք Փիլոնի Յաղագս Ելից գրոցն

Սկիզբ. բն. իսկ առաջին եւ սկիզբն ըստ
բաղանունութեան է սասացեալ. լծ. առաջինն
եւ սկիզբն մի անուանէ սասացեալ...

Վերջ. բն. իբր ոչ ի նոսս տպաւորելով.
լծ. եւ ինքն ոչ պակասի եւ կամ յումեքէ
ափակ առնու, այլ արտաքոյ ամենեցուն
մնայ:

ՄՄ № 2595, թղ. 258ա – 261ա: ՄՄ №
1053, թղ. 344ա – 349ր: ՄՄ № 2059, թղ.
117ր – 123ա: ՄՄ № 1480, թղ. 567ր –
570ա:

Spec Ia

*E

Յաղագս քահանայից Ա

Սկիզբ. բն. պատիւ քաջութեան. լծ. քաջ
եւ արիութեան եւ առաքինութեան ազգին
ետ վարձ Աստուած զքահանայութիւն...

Վերջ. բն. Հայրն երկնաւոր աղաւթիւք
քահանային բժշկէ զմեղուցեալն:

Պատճառ գինոյ³⁴

Զէ պարտ արբենալ յաղագս չորս ինչ
պատճառի դանդաղութեան, եւ մոռացման,
եւ քնոյ, եւ անզգայութեան. քանզի անա-
պակ զմարմնոյ զօրութիւն թուլացուցանէ,
եւ դժուարաշարժագոյնս զմասունսն առնէ,
եւ դանդաղագոյնս գործէ, եւ բռնի ի քուն
հարկէ մտանել, եւ զոգւոցն պնդութիւն
թուլացուցանէ, մոռացման միանգամայն եւ
անզգայութեան պատճառ լինի, իսկ որ
զգաստք են մասունք մարմնոյ, թէ թուա-
ցեալք դիւրախաղաց լինին, եւ զգայու-
թինք մաքրադոյնք եւ լուսաւորագոյնք,
եւ միտն արագատեսիլք, մինչեւ յառաջա-
գոյն ասել զիրս կարել, եւ զորս յառաջ ե-
տես յիշել:

Յաղագս քահանայից Բ

Սկիզբ. բն. Հուրբն. փեսայն է...

³⁴ Այս հատվածը Փիլոնի «Յաղագս քա-
հանայիցն» տեղիի (Փիլոնի Երրայեցույ
ձառք..., էջ 183 = Spec I, 98–99) վերլու-
ծագրական խմբագրությունն է: Հետա-
քրքիր է, ի գեպ, որ նույն սյուժեն գտնվում
է Հովհաննես Երզնկացի Պլուզին վերա-
գրվող կանոններում: Սակայն, որքան էլ
դա տարօրինակ թվա, ըստ Գ. Գրիգորյանի
դասակարգման տեղին պարունակող լուծ-
մունքը պատկանում է ոչ թե «Երկրորդ»,
«Ալլուզյան», այլ «առաջին», այսինքն
«արկավագյան» ժողովածուին: Բացի այդ,
թեմայի նույնությունը լավագույնս թույլ է
տալիս դիտելու վերլուծագրողի և Հովհան-
նես Պլուզի ոճերի և մտքի ընթացքների
տարբերությունը.

«...Մի սիրել գինին եւ զարբեցութիւն,
զի գինին չորս մեծ իրք կորուանչ մարդոյ,
լզքունյ ածէ եւ վնաս բերէ զհոգին,
զիսելքն, զըռզակն եւ զհարկիքն: Զոր օրի-
նակ նաւ յորժամ ծանր լինի, ի ծով ընկղիմ,
եւ զոր ինչ ի նեղքս կայ, կորուանչ, նոյն-
պէս մարդ, որ ծանրանայ արբեցութեամբ,
կորուանչ զամենայն բարին (Է. Բ. աղ -
դ ա ս ա ր յ ա ն. Հովհաննես Երզնկացին
և նրա խրատական արձակը. բնագրեր.
Երևան, 1977, էջ 238):

Վերջ. բն. որ չսպանանէին զնայ վրէժառուքն:

ՄՄ № 1053, թղ. 349ա – 350բ: ՄՄ № 1480, թղ. 570ա – բ: ՄՄ № 2059, թղ. 123ա – 124բ: ՄՄ № 2595, թղ. 261ա – 262ա:

Spec Ib

*F1

Յաղագս բագնին

Սկիզբ. բն. Վայելչապէս կարծեմ. լծ. վայելուչ եւ արժանապէս է այս որ հանապազորդ ի վերա բագնին հուր այրէր...

Վերջ. բն. որ զմիտս եւ զգայութիւնս աստուծացուցանեն ինքնասիրութեամբ իւրեանց:

ՄՄ № 1053, թղ. 350բ – 351բ: ՄՄ № 1480, թղ. 570բ – 571ա: ՄՄ № 2059, թղ. 124բ – 126ա: ՄՄ № 2595, թղ. 262ա – 263ա:

*F2

Այս բանք յաղագս բագնին իրաց

Սկիզբ. բն. ի տասն բանսն ասէ. լծ. իսկ մոլարն ոմն ոչ փոքր...

Վերջ. բն. մի կողմն գազանի եւ միւսն աւձի, եւ մեջն հուր ցոլանայր, եւ այս եւս առասպել:

ՄՄ № 1672, թղ. 139ա – 140բ:

Decal

*G

Յաղագս տասն բանից

Սկիզբ. բն. բարիատեացն. լծ. բանսարկուն է, որ նախանձեցաւ ընդ հոգւոյ իմոյ բարին...

Վերջ. բն. որպէս զորավարք եւ իշխանք ի դասուք, որ զաւրէնսն լքանէն:

ՄՄ № 1053, թղ. 351բ – 354բ: ՄՄ № 1480, թղ. 371ա – 372բ: ՄՄ № 2059, թղ. 126ա – 129բ: ՄՄ № 2595, թղ. 263ա – 265ա:

Spec III

*H

Ո՛չ չնայցէս

Սկիզբ. բն. Ոչ միայն վաղվաղիցէ գիտաց ...

Վերջ. բն. թէ չարագործք առանց կրելոյ պատուհասի մնան. բազում նախանձին ընդ գործս նոցա:

ՄՄ № 1053, թղ. 354բ – 355ա: ՄՄ № 1480, թղ. 572բ – 573ա: ՄՄ № 2059, թղ. 129բ – 130ա: ՄՄ № 2595, թղ. 265ա – բ (def):

Samp

*I

Ի Սամսոն առանց պատրաստութեան

Սկիզբ. բն. եւ դագ բանիւք. լծ. ողոք բանիւք...

Վերջ. բն. պատերազմ որոյ էր յարուցեալ ի վերա նորա:

ՄՄ № 1053, թղ. 355ա – 356բ: ՄՄ № 1480, թղ. 573ա – բ (def): ՄՄ № 2059, թղ. 130ա – 132ա: ՄՄ № 2595, թղ. 265բ – 266բ:

Jona

*J

Յաղագս Յովնանու

Սկիզբ. բն. այնոցիկ, որք զմարդարէսն ընթեռնուն. լծ. մարդիկ որ կարդան զմարդասիրսն, ընդ այն զարմանան...

Վերջ. բն. եւ ոչ բուն ձեռագործ կռոց իւրեանց երկիր պագանեն այժմ:

Ճառ. բն. մատամբք ձեռաց մատնեցայ. լծ. թէ զայն ասէ որ մատամբք վիճակ արկին:

ՄՄ № 2595, թղ. 266բ – 267բ: ՄՄ № 59, թղ. 9բ – 11ա: ՄՄ № 1053, թղ. 356բ – 357ա (def): ՄՄ № 1480, թղ. 573բ – 574ա (def): ՄՄ № 2059, թղ. 132ա – բ (def):

Deo

*K

Աստուծած մեր հուր ծախիչ, ի տեսիլ երից մանկանց

Սկիզբ. բն. քանզի էին երեւումն իմանալի արեգականն ծագեաց. լծ. էին Աստուծոյ երեւումն ոչ որպէս զգալի լոյսս, այլ իմանալի...

Վերջ. բն. զփառս իւր ոչ կամի ալլում տալ եւ զանունն իւր դրօշելոց:

ՄՄ № 1053, թղ. 357ա – բ: ՄՄ № 1480, թղ. 574ա – բ: ՄՄ № 2059, թղ. 132բ – 133ա: ՄՄ № 2595, թղ. 267բ – 268ա (def)

*QG IV***L 1*

[Լուծմունք Փիլոնի գրոցն լինելութեան
բան չորս]

Սկիզբ. բն. եւ երեւեցաւ Աստուած Ար-
քահամու. լծ. ըստ ճառին յայտնի է, բայց
մին այլաբանութիւն կայ ի սմա, քաղգեա-
կան լեզուաւն...

Վերջ. բն. եւ չէ ինչ որ հակառակ
տուեալ անկենցաղ կեանս. լծ. էր զոր ունէր
ի յինքն չարիս ծաւա. եւ զոր անհարկաւոր
չար կեանս ստացաւ իւր կամօք, զոր կամի
յիշել զկինն:

ՄՄ № 59, թղ. 25ա – 33ա: ՄՄ № 2595, թղ. 268ա – 274ա:

**L 2*

[.....]

Սկիզբ. բն. Բայց ծառս միայն այլարա-
նեալ է. լծ. զծառս զկաղնին միայն այլա-
րանելի է...

Վերջ. բն. ոչ ի պարզագոյնն եւ յան-
լոյս. լծ. զի անլոյսն խաւար է ... եւ անորդի
լինի, այսինքն առաքինութեան կարգաց,
զոր աստի ասէ:

*ՄՄ № 437, թղ. 227թ – 253թ: ՄՄ № 1053, թղ. 301ա – 344թ (def): ՄՄ № 1480,
թղ. 545ա – 567թ (def): ՄՄ № 2059, թղ.
67թ – 67ա (def):*

*Leg***M 1*

Լուծմունք Փիլոնի այլաբանութեան
Սկիզբ. բն. եւ կատարեցաւ երկինք եւ
երկիր. լծ. երկինք զմիտքն ասէ, եւ երկիր
զգայութիւնն...

Վերջ. բն. վասն մարմնական ախտից
որ են կուռք, եւ յիմար մտաց, որ ի մտաց,
որ ի վեր ելանէ, որպէս զփառաւոն մինչեւ
ի վերջին զկորուստն նոցա պատմէ:

ՄՄ № 2595, թղ. 274ա – 276ա:

**M 2*

Լուծմունք այլաբանութեան գրոց
Սկիզբ. բն. Զաւրս զայն ի վեր անգ զիր
ասաց. լծ. զոր աստանօր ասէ ի վեր զիր ա-
սաց, այս զիր լինելութեան...

Վերջ. բն. եւ ի վերա այնր յաղթու-
թեան պսակիլ:

*ՄՄ № 1053, թղ. 347ա – 391ա: ՄՄ № 1480, թղ. 513թ – 523ա: ՄՄ № 2059, թղ.
152թ – 172ա: ՄՄ № 437, թղ. 193ա – 202թ:*

**M 3*

Լուծմունք այլաբանութեան Փիլոնին
Սկիզբ. բն. Մտաց եւ զգայութեան. լծ.
Տեսակի մտացն զերկին նշանակ ասէ. եւ
տեսակի զգայութեան զերկիր ...

Վերջ. բն. զոր ոչ կարասցին այսմ նմա-
նել մարդկան բազմաժողով տօնք եւ
խնդութիւնք (աւրչնեալ Հոգին Սուրբ Աս-
տուած):

ՄՄ № 2379, թղ. 98ա – 113ա:

*Abr***N 1*

Լուծմունք Փիլոնի նահապետացն

Սկիզբ. բն. Այլ վասն երկնի ի սոցա են
ինչ որ աշխարհիս են մաս. լծ. սոցա որ ա-
սացաք, են որ մասունք աշխարհիս են երկ-
րի եւ ջրոյ...:

Վերջ. բն. անջերանելի. լծ. անհիւանդա-
նալի:

ՄՄ № 2595, թղ. 276թ – 278ա:

**N 2*

Լուծմունք նահապետաց գրոց

Սկիզբ. բն. Տերունեան օրինացն. լծ. Աս-
տուածային օրինացն զհինդ գիրս Մովսեսի
աւրէնք կոչչ աստուածային...

Վերջ. բն. եւ չերանելի. լծ. չերմ յար-
ձակմամբ:

*ՄՄ № 437, թղ. 183թ – 189թ: ՄՄ № 1053, թղ. 357թ – 368ա: ՄՄ № 1480, թղ.
504թ – 510ա: ՄՄ № 2059, թղ. 33ա – 145ա:*

**N 3*

[.....]

Սկիզբ. բն. Ի տերունեան գիրս. լծ. Աս-
տուած զնոցա առաքինութիւն Հոչակեաց ի
գիրս Աստուած...

Վերջ. բն.որ վարդապետական առա-
քինութիւն ունի առանց բանականին եւ
վարժականին. ոչ կարէ կեալ. եւ այլքն

նոյնավէս. որ զմին ունին եւ երկուցն հա-
ղորդէ:

ՄՄ № 2379, թղ. 163ա – 225բ:

Contempl

*Օ 1

Լուծմունք Փիլոնի Հիւսեացն

Սկիզբ. բն. երկնի տեսութիւն խնդրու-
թեամբ ընկալան. լծ. զտեսական առաքի-
նութիւն:

Վերջ. բն. զբութիւնս եւ զայնոսիկ որ
ի սմանէ եւ Հոգեւոր. լծ. զոր բնութեամբ
դիտէին ի տեսական առաքինութենէ. եւ
զոր ի Մովսիսի օրինացն ուսան. եւ զոր ի
Հնագոյն ընկալան:

ՄՄ № 2595, թղ. 278բ – 280ա:

*Օ 2

Յաղագս հեսսեաց գրոց

Սկիզբ. բն. Հեսսեացն սակս. լծ. ոմանք
հեղեացն սաեն. զի հեղք էին, այլք կրաւ-
նականացն սակս...

Վերջ. բն. Պատիւ քաջալերութեան ա-
ռաջի եղեալ. լծ. զքաջալերութեան պատիւ
առաջի եղ նոցա, որ քաջալերեալ մնացին ի
մէրն, որ քան զամենայն բարեբաստութիւն
լաւագոյն է:

ՄՄ № 437, թղ. 189բ – 193ա: ՄՄ №
1053, թղ. 368ա – 374ա: ՄՄ № 1480, թղ.
510ա – 513բ: ՄՄ № 2059, թղ. 145ա –
152բ: ՄՄ № 2379, թղ. 143ա – 161ա /Բան
վերլուծական յաղագս Յեսեացն/:

Հավելված. «Փիլոնական» լուծմունքների նախադրությունները

(1) Փիլոնի Յաղագս

Նախախնամութեան առ. Աղեքսանդրոս բան
առաջին³⁵

ՄՄ ՄՄ № 1672, թղ. 128ա – բ:

(1) Անզեղչ Աստուած ի ձիրս, եւ զոր
պարգեւէ, այլ ոչ նախանձի, որպէս առ
մարգս տեսանեմք, զի արար: (2) Քանզի
զոր եգ ի բնութեանս, զոր ստեղծ, եւ զամե-
նայն զոր ետ, բարի է, զի մասն մի խոհա-
կանութիւնն է, որով միշտ ի խնդիր լինիմք
բարւոյն: (3) Քանզի տեսանեմք եւ զառա-
ջիկա գիրս յայսմանէ յարմարեալ, եւ թէ
զիարգ է պատճառ, յայտնէ ամենեցուն ի-
մաստունն Փիլոն՝ ագգաւ եւ ուսմամբ, եւ

վարուք³⁶: (4) Այլեւ Աղեքսանդրոս եղբաւ-
րորդի նորին, եւ ուսմամբ յունականաւ
վարժեալ, աշակերտ գոլով աւրինացն Մով-
սէսի³⁷, տեսեալ սորա զբազմադիմի ասացո-
ւածն յունական առասպելին, որ է այսպէս:

(5) Ասացին ոմանք ինքնեղ գոլ զարարածս,
եւ այլք թէ զհիւղէ գտեալ յայնմանէ գոյա-
ցոյց, եւ կէսք՝ թէ զերկիրս էառ³⁸, եւ ի
սմանչ³⁹ երիցն տեսակ՝ խոնաւ, որպէս ջուր,
եւ շոգոլի⁴⁰, որպէս աւգ, [եւ ջերմ, որպէս
բուսուցանէ երկիր. ոմանք զլուր]⁴¹, այլք
զաւդ, կէսք՝ զհուր, այլք զանազանք⁴² (6)
[թի եւ]⁴³ կէսք, մոլորեալք ի բանս Մովսէսի
յայնս, զի ասէ. «Եւ խաւար ի վերայ անդն-
դոց, եւ Հոգի Աստուծոյ շրջէր ի վերա
չուրց», վկայէ, սաեն, // եւ Մովսէս առնել
ըստ նոցա սկսաւ. ասէ, թէ ոչ սկսաւ Աս-
տուած, յայտ է, թէ եւ ոչ զգտեալն արար.
քանզի ոչ յառաջ իմանալ սկսաւ, այլ առ-
նել: (7a) Ասացին ոմանք, թէ գտեալ

³⁵ Այս նախադրության նույն հատվածը
«պատճառների» հավաքածուներում բեր-
վում է «Փիլոնի Յաղագս նախախնամու-
թեան բան առաջին առ. Աղեքսանդրոս» Գո-
շին ասացեալ պատճառը» խորադրով (տե՛ս
= ՄՄ № 1879, թղ. 158ա–158բ, բ = ՄՄ
№ 1897, թղ. 197բ–198ա, ս = ՄՄ № 4150, թղ.
42բ–43ա, ձ = ՄՄ № 4765, թղ. 40ա–40բ, ը
= Վիեննա 47, թղ. 217բ–218ա): Անկյունա-
վոր փակագծերում բերում ենք տարրնթեր-
ցումներ ըստ թվարկած ձեռագրերի, գտ-
տարկ քառակուսի փակագծերը ցույց են
տալիս, որ տարրնթեռնելի է քառակուսի
փակագծերում գտնվող ամբողջ հատվածը
(պարբերությունների համարակալումը
մերն է): Սկսած // նշանից «պատճառի»
բնագիրը բոլորովին տարբերվում է լուծ-
մունքի նախադրությունից (տե՛ս աբեմ-
տարբերակութիւնը):

³⁶ bc վարիւք

³⁷ e Մովսէսի

³⁸ acde առ.

³⁹ acde սմա

⁴⁰ e զգոլուշի

⁴¹ abcde [] չիք

⁴² abcde զանազանք, եւ ջերմ, որպէս
բուսուցանէ երկիր. ոմանք զլուր

⁴³ bd [] եւ զի

զնիւթն խորհեալ եւ ապա յետոյ արար. սա ասէ, թէ Աստուած ի յառնել սկսաւ, զի ոչ է կարաւտ իմանալոյ այն, որ ոչ բնաւ ամենեւ- մին յաշխարհի: (8a) Ասէ, թէ այս աշխարհս արարական է ապա ո՞ւր է այն անսկիզբն նիւթն, զոր դուք ասեք: (9a) թէ ոչ յամենե- ցունց խոստովանի՝ մասն աշխարհի դոլ ոքն մարդ. աւրինակ մեզ մարդս, զի սա մասն աշխարհի եւ արարածական: (10a) եւ մասնն արարած է յայտ է, թէ եւ բոլորն, եւ ոչ յանբաւս տարեալ զյառաջ, քան զսկիզբն ոմանք անբաւ եւ անսկիզբն ասացին: Իսկ ես ոչ ասեմ:

/ԲՆ/ Այդ Հեռալի իմաստութիւն:

(abcde)

...զկայէ, ասեն, // Մովսէս⁴⁴, թէ յե- րիցս յայսցանէ դոյացոյց Աստուած՝ ի խա- սարէ, յանդնդոց, ի ջրոյ⁴⁵ զմիտս ասացե- լոցն ոչ իմացեալ, (7) զի նախ⁴⁶ սկիզբն եղ լինելոյ երկնի, եւ անդնդոց, եւ յայսմանէ զմասնաւորսն դոյացոյց զայս ասելով, ինք- նարաւ եւ անվախճան, որպէս ինքնեղ, այ- լեւ անխնամ Աստուծոյ⁴⁷ ամենեւին: (8) Զայս ամենայն առաջի եղեալ՝ Ալեքսանդ- րոս ինդրէր լուծումն ի Փիլոնէ, որպէս վա- յելէր նորա⁴⁸ իմաստութեանն, ոչ թէ Հակա- ռակութեամբ, այլ ուսումնասէր հոդովի: (9) Այս եւ որ սոցին նման է, պատճու առաջի- կայ զրոցս, որպէս ասէ. Յորժամ զնախախ- նամութեանն⁴⁹ բան...

(II) Յաղագս նախախնամութեան Փիլոնի
առ Ալեքսանդրոս բան առաջին

ՄՄ № 59, թղ. 11ա: ՄՄ № 2595, թղ.
242ա: ՄՄ № 437, թղ. 110բ: ՄՄ № 1480,
թղ. 474ա:

Անզեղը է Աստուած, որ արար զմարդն բանական, եւ ետ նմա մասն խոհականու- թեան՝ որ է առաքինութիւն բանականին. վասնզի խոհականութիւն ընտրէ զամե- նայն, մինչեւ քննէ գտեսակս իմաստու- թեան, բայց առաւել հաւատոյն է այս

մասն, զի հաւատով ճանաչեմք, թէ աշ- խարհս յԱստուծոյ սկսեալ է եւ ի նմանէ նախախնամի, եւ ոչ ինքնեղք եւ անիմանա- լի, որպէս Հեթանոսաց իմաստունքն ասա- ցին, զոր եւ երանելի Փիլոն խրատելով ու- սուցանէ ղԱլեքսանդրոս եւ զԼուսիմաքոս՝ ի բաց կալ ի յայնպիսի սուտ կարծեաց, եւ Հաւանել Աստուածային աւրինացն վարդա- պետութիւն, որով վարժեալ էր Փիլոն, եւ Հաւատով իմանալ, եթէ դոյ նախախնամու- թիւն, եւ աշխարհս յԱստուծոյ սկսեալ:

(III) Փիլոնի վասն Ծննդեան գրոցն

լուծմունք

ՄՄ № 59, 33բ: ՄՄ № 1480, 523ա: ՄՄ
№ 2595, 251ա-բ:

Փիլոն իմաստասէր աղդաւ Ղեւտացի
էր⁵⁰, եւ քաղաքաւ յԱլեքսանդրոյ. եւ վա-
րուք նման էր մարդարէիցն, այլեւ //Հնորհ
ունէր⁵¹ մարդարէական, որ եւ միանդամայն
եւ երկիցս յիշէ յիւր գիրսն զՔրիստոսի Աս-
տուածութիւն: Իսկ վասն քրիստոնեութեան
ասեն, թէ ի Պետրոս մկրտեցաւ, յորժամ եր-
թայր յԱլեքսանդրէ ի Հռոմ, եւ այլ ասեն,
թէ⁵² ինքն Փիլոն⁵³ առ Գայիոս երթայր⁵⁴
դեսպան՝ յայնժամ, ասեն⁵⁵, ետես զնշանան,
զոր առնէր Պետրոս, Հաւատաց եւ մկրտե-
ցաւ. եւ կէսք⁵⁶ ասեն, թէ ասաց. Ոչ է պարտ
//թողուլ մեզ զօրէնսն⁵⁷. որպէս առնէ Աստո-
ւած Մովսէսի օրինադրէ⁵⁸, թող առնէ եւ
ինձ՝ Փիլոնի⁵⁹ օրինապահէի⁶⁰: Ինքն ինդրէ
եւ ինքն լուծանէ⁶¹:

⁵⁰ 1480 չիք

⁵¹ 1480, 2595 //ունէր շնորհ

⁵² 1480, 2595 թէ երբ

⁵³ 1480, 2595 գնաց

⁵⁴ 1480, 2595 չիք

⁵⁵ 1480, 2595 չիք

⁵⁶ 1480 այլ : 2595 ու այլ

⁵⁷ 2595// մեզ այժմ զօրէնս թողուլ

⁵⁸ 1480, 2595 օրէնսդրի

⁵⁹ 2595. չիք

⁶⁰ 1480, 2595 օրինապահողի

⁶¹ 1480 լուծանէ: Առաջին շարադրու-
թիւն սորա նախախնամութիւն, բ' Ծնն-
դոցս, դ' նահապետացն, դ' Ալեքսանդր-
թիւն, ե' երեւեցանն, զ' Ելիցն, յորում Ժ'
բանն, Ամմփոնի, Ցունանու առածք, է'
Միայնակեցացն. թէ եւ թուի ոմանց Ծնն-
դոցն եւ Ելից առաջին եւ երկրորդ դոլ, այլ
ոչ է:

⁴⁴ de qՄովսէս

⁴⁵ e ջրոյն

⁴⁶ e նախնի

⁴⁷ de չիք

⁴⁸ de նմա

⁴⁹ c զյաղաղս նախախնամութեանն]

(IV) Փիլոնի այնոցիկ, որ ի Լինելութեան⁶² խնդրոց եւ լուծմանց

ՄՄ № 59, 25ա: ՄՄ № 1480, 545ա:

ՄՄ № 2595, 268ա:

Մեկնութիւն ի⁶³ զերայ այնոցիկ, որ ընդ լինելութեամբ⁶⁴ են եւ եղականք:

Արդ՝ առաջին դիրք Փիլոնի նախախնամութեան⁶⁵, եւ⁶⁶ //երկրորդ՝ Ծննդոցն⁶⁷, եւ⁶⁸ երրորդ՝ Այլարանութեան, չորրորդ՝ նահապետացն, չինգիրորդ՝ երեւեցանն: Իսկ չորրորդ բան զայն ասէ, որ ըստ կարգի պատմութեան յիշէ, առաջին վասն արարչութեան ասէ, եւ երկրորդ վասն նոյի տապանին, երրորդ՝ սկիզբն ելանելոյն ի տապանէ //կամ Աբրահամ⁶⁹. չորրորդ վասն երեւմանն Աստուծոյ Աբրահամու եւ աւետեացն որ առ. նա⁷⁰:

(V) Փիլոնի նախագրութիւն յաղաղս ելից գրոցն

ՄՄ № 1053, 344ա: ՄՄ № 1480, 567բ:

ՄՄ № 2059, 117ա: ՄՄ № 2595, 257բ:

Գիրս⁷¹ այս քան զամենայն մատեանս երրայեցւոց⁷² պատուելի գտաւ առ նոսա, վասն զի բազում նշանք եւ արուեստք⁷³, զոր արար Աստուծած ի ձեռն Մովսէսի, ի յինքեան պարունակեալ ունի զելսն յեգիպտոսէ, եւ //զբաժանումն ծովուն⁷⁴, եւ զընկդմիլն Փարաւոնի, եւ⁷⁵ զտուչութիւն օրինացն, եւ զայլսն⁷⁶ ամենայն: Այլեւ առաջին վասյ ասեն, թէ գրեաց Մովսէս, զի զոր ինչ ետես եւ լուաւ Աստուծոյ, զայն նախ գրեաց, եւ ապա //ի գալն յանապատն⁷⁷ ել ի լեառն առ Աստուծած եւ եցոյց նմա անմարմնապէս զօրինակ արարչութեան արա-

րածոցս, եւ ապա յանձն առ գրել զծնունդք, որ է լինելութիւն: Ասեն⁷⁸, թէ այս եղեւ պատճառ չարչարելոյն զիսրայէլ, եւ մանկանցն գետասոյզ զառնելն⁷⁹. երկու մարդ վիճեցան ընդ միմեանս մեկին⁸⁰ Աստուծին⁸¹, եւ միւսոյն⁸² Ասեղեկ⁸³: Ասեղեկն երրայեցի⁸⁴ //զԱսադն եսպան⁸⁵ զեգիպտացի, եւ զայս⁸⁶ լուեալ եգիպտացոցն⁸⁷ բարկացան յոյժ. այլեւ երկեան երրայեցոցն, զի մի բազմացեն եւ զորացեն⁸⁸ ի վերա նորա⁸⁹: //Վասն որոյ Հրաման եւ Փարաւոն զարուսն կորուսանել եւ զէգն ապղեցուցանել⁹⁰:

(VI) Յալագս ծ' բանից

ՄՄ № 1053, 351բ: ՄՄ № 1480, 371բ:

ՄՄ № 2059, 126ա: ՄՄ № 2595, 263ա:

Այս որիշ գիրք է. ի յԱղեքսանդր քաղաքին քաղակապես դրին⁹¹ զսայ երրայեցոցն. յետոյ, յորժամ ելաւ, ասաց զայս:

(VII) Ի Սամսոն առանց պատրաստութեան

ՄՄ № 1053, 355ա: ՄՄ № 1480, 573ա:

ՄՄ № 2059, 130ա: ՄՄ № 2595, 265բ:

Մին որ անկարգ է ի սկսանել ի ճառն, եւ երկրորդ՝ զի չէր յառաջ խորհել. ի խնդրել ժողովոյ⁹² յաւուր շաբաթու ի նմանէ վասն Սամսոնի՝ անպատրաստ սկսաւ:

(VIII) Փիլոնի Այլարանութեան նախագրութիւն

ՄՄ № 1480, 513բ: 2595, 274ա:

Արտաքնոյն վարդապետքն զին օրինացն ուսուցիչք ծաղր առնելով ասէին, թէ նոցա օրէնքն չունի հոգի, այսինքն այլա-

⁶² 2595 Լինելութիւն

⁶³ 2595 է ի

⁶⁴ 2595 լինելութեան

⁶⁵ 2595 նախախնամութիւն

⁶⁶ 2595 չիք

⁶⁷ 1480 // Ծննդոցն՝ երկրորդ

⁶⁸ 1480 չիք

⁶⁹ 1480, 2595 // չիք

⁷⁰ 2595 նմա

⁷¹ 2595 գիրքս

⁷² 2595 երրայեցւոցն

⁷³ 2595 սքանչելիք

⁷⁴ 2059 // չիք

⁷⁵ 2059 չիք

⁷⁶ 1053 զայլն

⁷⁷ 2595 // չիք

⁷⁸ 2059, 2595. եւ ասեն

⁷⁹ 1480 առնել՝ 2595 առնելոյն յեգիպտոսս

⁸⁰ 1053, 1480, 2059 եգիպտացւոյն

⁸¹ 2595 սկիլն եգիպտացւոյն

⁸² 1480 միոյն

⁸³ 2595 Ասիդիհ երրայեցւոյն

⁸⁴ 2595. չիք

⁸⁵ 2595 // եսպան զԱսադն

⁸⁶ 1053 զայն : 2595 այս

⁸⁷ 2595 եգիպտացւոյն

⁸⁸ 2595 զորացին

⁸⁹ 2595, 1480 նոցա

⁹⁰ 1053 // չիք

⁹¹ 1480 գրին

⁹² 2595 ժողովրդեանն

բանութիւն չկարէ ընդունել, եւ վարդապետքն //նոցա չեն⁹³ գիտնական։ Վասն որոյ Հարկ եղեւ Փիլոնի ցուցանել, թէ ստուդապես ճշմարիտ⁹⁴ է Աստուծոյ օրէնքն, եւ կենդանական հոգի է ի նմանէ ընկալեալ։ Վասն այս պատճառի ի կիր առնու զպատմութիւն արարածոցս, եւ զայն որ «ասաց եւ եղեւ, հրամայեաց եւ կատարեցաւ» օրէնք ասէ, եւ գնէ զայն որպէս մարմին, եւ այլարանութիւն որպէս հոգի, եւ թարգմանի այլարանութիւն «առակ օրինակին, որպէս ասէ առաքեալն, //եւ կամ «այլասացիկ բան»⁹⁵, եւ կամ «մտաւոր իմացք» եւ «նոր տեսութիւն»։

(IX) Նախադրութիւն Փիլոնի Նահապետացն

ՄՄ № 1480, 504թ: ՄՄ № 2595 276թ:

Գովէ զառաջին արդարսն, որք վարեցան ընական օրինակօքն զոր ունէին ինքեանս, եւ ոչ ի Հարկէ, կամ ուսեալ այլոց, այլ իշխանութեան⁹⁶ կամաց։ Եւ գարձեալ, զի Հեթանոսոք գովէին զարանց⁹⁷ նախնիսն, եւ արձանացուցանէին⁹⁸ զմեծութիւն եւ զփառս նոցա, զոր ունէին, իսկ աստուածապաշտուն ծաղր առնէին, թէ նոցա Հարկն առանց օրինաց կեանս վարեցան, չչ այն ընգուննի, զի չէին ուսեալ եւ տեսեալ յայլոց։ Վասն որոյ գովէ Փիլոն զնոսա, եւ ցուցանէ զնոսա ընական օրէնսն⁹⁹ եւ զառաքինութիւնսն Հոգեւոր¹⁰⁰ գրաւորականին ամենեւին ոչ հակառակ։ //Այլեւ անձինք առաք[ին]եաց միշտ ցանկացող բարոյն, եւ զուարձանան յիշատակաւ բարի արանց։ Բայց այս եղեւ պատճառ, զի Հրէայքն, որ ի ժամանակացն յայնց ցրուեալ եւ ի տառապանս անկեալ էին, ասէին, թէ Աստուած զամենայն բարութիւնս ըստ կամաց Հարցն պատրաստեաց՝ վասն այն Քրիստոսն Հնագանդ եղեւ¹⁰¹ նմա, իսկ մեք, զի օրէնքն ծանր եւ անհնարինք էին, ոչ կարացաք առ-

նել, մատնեցաք ի վիշտս։ Իսկ իմաստունս առնու զբան պատզամացն Մովսէսի, եւ յայտ առնէ, թէ որքան կրեցին վիշտս, եւ ոչ անկան կամացն Աստուծոյ, եւ թէ ոչ այլ ինչ է օրէնք, բայց յիշատակիչ օրինաց բնութեան, զի եւ նոքա բնութեամբ զօրինացն գործեցին¹⁰².

(X) Յաղագս Հիւսեանցն նախադրութիւն

ՄՄ № 1480, 510թ-ը: ՄՄ № 2595, 278թ:

Հեսսեայքն թարգմանին Հոգեւոր բժիշկք, կամ միակիեացք, որ զտեսականն եւ զգործականն հիւսին ընդ միմեանս¹⁰³։ Սոքա էին հաւատացեալ քրիստոնեայց յերուսաղեմ¹⁰⁴, եւ բաժանեցան յանչաւատից ազգականաց իւրեանց Հրեշտակի ազդմամբ, եւ չոգան մտին յերկիրն եգիպտացւոց, զի լուան եթէ գալոց են Հոռվմայ թագաւորքն, Տիտոս եւ Վեսպիանոս (Տիլ), վրէժ առնուլ յերուսաղեմացւոցն վասն խաչելոյն Աստծուոյ։ Սոքայ են այնք, զոր Եղեկիչլ ետես եւ //լուան, որ¹⁰⁵ ասաց ընդ այն, որ զգեցեալ էր զգճնաւորն, թէ անց ի մէջ քաղաքիդ, եւ դիր նշան ի ճակատ¹⁰⁶ արանց¹⁰⁷, որ հեծեն եւ յոդոց հանեն։ //Իսկ ոմանք կարծեօք վարեալ առ այս ասէն՝ Անյայտ է, թէ քրիստոնէից պատմէ, այլ մանաւանդ զօրէնապահ Հրէից¹⁰⁸։

(XI) [...]

ՄՄ № 1672, 136ա:

Աղեքսանդրոս եղաւրորդի Փիլոնի, Լիւսիմաքոս՝ քուերորդի Աղեքսանդրի, այլեւ փեսա նորին։ Եւ արարեալ էր Աղեքսանդրի ճառս վասն այսպիսի պատճառանց. թէ եւ անասունք մասն ունին բանի, բայց ոչ ի նախախնամութենէ, այլ անձամբ վարին։ Զայս դրեալ եւ առաջի նստեալ իւր վարդապետին, ինքն հրամայէր ծառային իւրում կալ եւ ընթեռնուլ ի լսելիս վարդապետին իւրոյ։ Զայս լուեալ Լիւսիմաքոս եւ

⁹³ 1480 // չեն նոցա

⁹⁴ 1480 ճիշա

⁹⁵ 1480 // չիք

⁹⁶ 1480 յիշխանութենէ

⁹⁷ 1480 զի արանց

⁹⁸ 1480 արձանացւոց

⁹⁹ 1480 օրէնքն

¹⁰⁰ 1480 հաւասար

¹⁰¹ 1480 եղեն

¹⁰² 2595 // չիք

¹⁰³ 2595 իւրեարս

¹⁰⁴ 2595 ի յեղծ

¹⁰⁵ 2595 լուսաւոր

¹⁰⁶ 2595 ճակատոյն

¹⁰⁷ 1480 չիք

¹⁰⁸ 1480 // չիք

յոյժ զարմացեալ, կամէր ստուգել ի Փիլոնէ զզիարդն, այս է, զոր ասես բան ունել եւ անասուն կենդանիք: Մառայ իւրումն յետոյ կողման անկեալ, գիրս կարկառեալ առեալ ընթեռնոյր զԱղեքսանդրոս, ասէ, որպէս ցուցաւ իւր ծառային հրամայեաց ընթեռնուլ:

(XII) Այս բանք յաղագս բագնին իրաց ՄՄ № 1672, 139ա:

Գրեալ է յաւրէնսն ոչ թողուլ յեկեղեցին իւրեանց զմալեալ եւ զհատեալ եւ զպոննկորդի եւ զայլսն: Արդ այլաբանէ Փիլոն՝ մալեալ կոչէ, որք ասացին յաննիւթնիւթոյ առնել Աստուծոյ զարարածս, եւ Հատեալ անուանէ, որք ինքնեղ ասացին որպէս եպիկուրոսն, եւ պոռնիկս ասէ, որք րազում աստուածածնօթութիւնս, եւ յերկուս այլս, որք զմարդ յերկուս բաժանեն՝ ի բանական եւ յանբան. ոմանք ասացին, թէ միտքս է պատճառ կենաց եւ ոչ նախախնամութիւն Աստուծոյ, եւ կէ՞սք զսդայութիւնս ասացին. զսոսա ինքնամէրս կոչէ, եւ այս նշանակ[ք] անաստուածութեան են:

(XIII) [...]

ՄՄ № 1672, 139 թ – 140ա:

Վկայէ Փիլոն, թէ Աստուած զՏասն բանսն ինքեամբ հրամայեաց. ոչ սպառնայ, եւ ոչ ասաց սաստիւ, այլ միայն հեզութեամբ զմարդկայինս հրամաքեցոյց, զի մի ասիցեն մարդիկ, թէ երկեաք վասն այն զպատուիրանս նորա արարաք: Կամի Աստուած կամաւք առնել զբարին, այլ զպատուհամ ի ձեռն Մովսէսի յաւել, զի ինքն զբարին արասցէ, եւ զի ի վերայ ամուսնութեան աղաւաթսն այլ աւրինակ շրջել, զբահանային աղաւաթսն ասէ ի ժամ պսակելոյն, որովք որ յար առանց բաղայից են սովորեն վարիլ: Որպէս մեզ սովորութիւն է ասել, թէ զգլուխն բանամ եւ զբացաւ գլխով չամաչեմ ասել:

(XIV) Առանց պատրաստութեան ի Սամիսոն

ՄՄ № 1672, 140թ:

Միշտ սիրող է Աստուած քննող լինել նշմարիտ իմաստից, սակս որոյ իմաստնացոյց զՄողովմոն: Եւ որք քատակին նմա, ի

նոյն զաւրացոյց, եւ Սամփսոն, քանզի մի էր ի դատաւորացն, որպէս կարդ բանից պատմութեանն ցուցանէ: Իսկ առանց պատրաստելոյ, զի յաւուր շաբաթու սովոր էին սունն հսրայէլի [ի] ժողով լինել, էր լնդ նոսա եւ իմաստունն Փիլոն: Հարկեցին վասն վարուց Սամփ[սո]նի եւ նա ոչ խորհելով, որպէս սովորութիւն է վեհից, այլ անպատրաստ ըստ պատահմանն սկսաւ ասել նոցա, նախ զպարկեշտութիւն սափրեալ, յետոյ եւ զվարս. ասէ, թէ յողախոհութեանէ եհան, եւ զզաւրութեան նշան զգեսսն եհատ, ի մարդասիրութեանէ շրջեսցէ, զայն ասէ, թէ զհանդերձեալ դատաստանն աստէն հատոյց նմա. եւ դարձեալ միրեաց պահել զերանելոյն հրաման՝ զԱստուած ասէ ...

(XV) Ճ' բանն, եւ ոչ շնայցեսն, եւ ի թունան

ՄՄ № 1672, 151ա:

Հրապարակաւ ասացուած է, որ յառաջ է քան զամենայն. ասէ թէ նախ քան զմարդարէսն գովել, արժան է զհոդին Աստուծոյ, զի նա շարժէր զմարդարէսն, փոխանակ հատելս ի նոցանէ զբանն. ասէ, թէ ի մարդկային բնութիւնս բանականութիւն ունէին եւ այլ ինչ ոչ, եւ զայս դարձեալ ապականեցին:

(XVI) Աստուած մեր հուր ծախիչ, ի տեսի երից մանկանց

ՄՄ № 1053, 357ա: ՄՄ № 1480, 574 ա: ՄՄ № 2059, 132թ: ՄՄ № 2595, 267թ:

Քանզի այն որ համեմատեալ է ընդ Աստուծոյն իմանայոյն, Աստուծոյ իմանալի զաւրութիւնքն իմանալի մտաց եւ մեծագոյ աչաց երեւի. եւ նա լինի արժանաւոր Աստուծոյ երեւմանն, որ մաքրեալ լինի զհոդոյն ակն:

(XVII) Յաղագս զԱստուած ի բարեգործութեան հուր ծախող

ՄՄ № 1672, 152թ:

Այս ճառ ոչ է ըստ կարգի սսացելոցս, այլ առանձնաբար հարցեալ ուրուք, թէ զինչ է զոր ասէ Մովսէս, թէ Տէր Աստուած քո հուր ծախող. ոչ եթէ ծախէ ապականաբար, այլ արուեստապէս ի գործ աշխարհիս: Եւ այս քեզ նշանակ, որ երեւեցաւ Աբրա-

Համու նմանութեամբ երից մանկանցն, որ ասէ, թէ ահա արք երեք կային ի վերոյ նոր՝ այս է, զոր մանկունս ասէ, թէ յաղագս ուժգնութեան. եւ յայս միտս յիշատակէ, թէ առն ձեւով երեւեցան, զի գործող է Աստուած, եւ կրող՝ նիւթու:

(XVIII) [...]

ՄՄ № 2379, 97ա:

Անհամեմատ անիրաւութիւնն է այս, որ զայնոսիկ նախախնամութեամբ ի բնութենէ բանաւորութեան հասին մարդիկ, պարսաւեն այնու, որ զբանն անասնոցն տան եւ հաւասարեն զմարդ նոցա, եւ նազելի պարկշտութիւն արկանել զանասնօքն նոցա զբանն, որ ոչ ունէին անասունքն զբամի հոգք, եւ անտես է ի նոսա բնութիւն բանի: Աղեքսանդրոս ասացեալ էր զայս, թէ բան ունին անասունքն եւ Լուսիմաքոս լսեալ էր, եւ խնդրեց ի Փիլոնէ գարձեալ ասել, եւ Փիլոն ասաց զ Աղեքսանդրոս զսուտ բանքն, եւ դարձեալ ճշմարտապէս ելոյծ զամենայն, թէ չունին անբանքն բան եւ ցոյց: Աղեքսանդրոս աղբ[ոյ]րորդի էր Փիլոնի, եւ քեռի Լուսիմաքոսի, եւ Լուսիմաքոս ի քեռս հաւրեղբայր էր Փիլոնի:

(XIX) [...]

ՄՄ № 2379, 161ա – 163ա:

Աստուածային ասէ, եւ գհինգ գիրսն Մովսեսի աւրէնք կոչէ, եւ այլոց կրեցելոց իրաց, որ վասն պատերազմի եւ խաղաղութեան ասէ ի Լինելութեան գիրս. լինելութիւն. ծնունդն՝ մի են. եւ բեր եւ անբերութիւն, որպէս պատմէ, թէ հսահակ եգիտ գտարին ճաւոր եւ արքա. առաջ արքա. առաջ այս ինչ եւ զայս մի՛ առնէր, եւ զայս արագի՛ր: Եւ բովանդակ Ծնունդքն աւրէնք են, որպէս եւ այլ չորսն. եւ իբր կերպարանք են դրեալն մասնաւոր աւրէնք նահապետացս աւրացս (՝), որ բնութեամբ զարեցան, այնմ զոր պարտ էր զեցաւրէին քննիլ, Ռողաք (՝) լոնքցումն արարաք գերարգութեան կարգին, զի այս էր. գերագերագոյն (՝), որ բատ կարգի առնեաք, զոր արաք, այլ զընգհանրական նահապետացս վարքն իբր սկզբնատիպ գրաւորականին արարեալ զկնի զեցօրէին քննեցաք: Եւ սոքա զոր այժմ քննեմք աւրէնս, նոցա են, որ առանց խծրծի կեցեալ են:

սովն. եւ եւթն ամ լիութիւն յեգիպտոս եւ այլն: Պատմէ եւ զոմանց առաքինութիւն. զՍեթայն, զենովսայ, զենովքայն, զնոյին, զԱբրաամուն եւ զայլոցն, եւ զչարեացն զԿայենի եւ զայլոցն: Եւ զսոցանէ զոր ինչ ծնունդքն պատմէ, էր ինչ, որ երկիր, օգ, եւ ջուր, եւ հուր, եւ տունկք են, եւ մասունք աշխարհիս, եւ են որ երկինք են եւ մասն աշխարհիս. զի եւ երկինք մասն է աշխարհիս, եւ մարդ, եւ կենդանիք, զի ասէ: «Ի սկզբանէ արար Աստուած զերկին եւ զերկիր», եւ որ բատ կարգին մասունք. բայց այս գրոցս զբոլոր կատարեալ անուն աշխարհի զերագրեաց. զի գիր լինելութեան աշխարհի է սորա զերնագիրն: Եւ ստուգեցաք, զի Փիլոն զկցաւրէա գիրք է արարեալ, որ չէ առ մեզ. զից աւուր լինելութիւն ըստ կարի ասէ մեկնեցաք, եւ պատմէ հինգ գրոց աւրինացն եւ զկնի միմեանց մեկնել յետ զեցաւրէնք արարչութեան, որ ի կարգին է. «Այս են գիրք լինելութեան» եւ որ զկնի է, զրովանդակ ծնունդք, որ բազում մասունքն աւրինաց կան՝ զայս ինչ եւ զայս մի՛ առնէր, եւ զայս արագի՛ր: Եւ բովանդակ Ծնունդքն աւրէնք են, որպէս եւ այլ չորսն. եւ իբր կերպարանք են դրեալն մասնաւոր աւրէնք նահապետացս աւրացս (՝), որ բնութեամբ զարեցան, այնմ զոր պարտ էր զեցաւրէին քննիլ, Ռողաք (՝) լոնքցումն արարաք գերարգութեան կարգին, զի այս էր. գերագերագոյն (՝), որ բատ կարգի առնեաք, զոր արաք, այլ զընգհանրական նահապետացս վարքն իբր սկզբնատիպ գրաւորականին արարեալ զկնի զեցօրէին քննեցաք: Եւ սոքա զոր այժմ քննեմք աւրէնս, նոցա են, որ առանց խծրծի կեցեալ են:

**«Փիլոնյան» լուծմունքների համալիրները Երևանի Մատենադարանի
մատյաններում**

2595	59	1053	1480	2059	2379	437	1672	3276
&A1	J	A2	&A2	A2	A2	&A1	&A3	A2
B1	&A1	B2	B2	B2	&B2	B1 def	&B3	def.

<i>&C1</i>	<i>B1</i>	<i>L2</i>	<i>&N2</i>	<i>L2</i>	<i>M3</i>	# ¹⁰⁹	<i>&F2</i>
<i>&D</i>	<i>&L1</i>	<i>&D</i>	<i>&O2</i>	<i>&D</i>	<i>O2</i>	<i>A2</i>	
<i>E</i>	<i>&C1</i>	<i>E</i>	<i>&M2</i>	<i>E</i>	<i>&N3</i>	<i>B2</i>	
<i>F1</i>		<i>F1</i>	<i>&C2</i>	<i>F1</i>		<i>N2</i>	
<i>&G</i>		<i>&G</i>	<i>&L2</i>	<i>&G</i>		<i>O2</i>	
<i>H</i>		<i>H</i>	<i>&D</i>	<i>H</i>		<i>M2</i>	
<i>&I</i>		<i>&I</i>	<i>E</i>	<i>&I</i>		<i>C2</i>	
<i>J</i>		<i>Jdef</i>	<i>F1</i>	<i>Jdef</i>		<i>L2</i>	
<i>&K</i>		<i>&K</i>	<i>&G</i>	<i>&K</i>			
<i>&L1</i>		<i>N2</i>	<i>H</i>	<i>N2</i>			
<i>&M1</i>		<i>O2</i>	<i>&I</i>	<i>O2</i>			
<i>&N1</i>		<i>M2</i>	<i>Jdef</i>	<i>M2</i>			
<i>&O1</i>		<i>C2</i>	<i>&K</i>				

Ձեռագրերում գտնվող լուծմունքների հավաքածուների վերոբերյալ նկարագրությունից պարզ երևում է, որ

- *Prov, Anim, Leg, Abr* ունեն ամրողջական լուծմունքների երեք տարրերակ՝ *QG I-III, QG IV, Spec Ib, Contempl երկու, իսկ QE, Spec Ia, Spec III, Decal, Samp, Jona, Deo* մշակվել են մեկական լուծմունքում:

- ՄՄ № 2595 մատյանում զետեղված վերլուծագրական ժողովածուի յուրօրինակությունը սահմանափակվում է դրա վերջին մասով՝ *M1 N1 O1* լուծմունքներով: *A1 B1* լուծմունքները պարունակում են նաև ՄՄ № 59 և № 437 մատյանները, ընդ որում բնագրերի համագրությունը ցույց է տալիս, որ այս վերջինների բնագրերը չատ ավելի որակյալ են: ՄՄ № 59 մատյանում գտնվում են նաև *L1* և *C1* լուծմունքները:

- Մեկնությունների *DEFGHIJK* խումբը ընդհանուր է չորս մատյանների համար՝ ՄՄ № 1053, 1480, 2059, 2595: Ուստի, այս խումբը զուգակցվում է ինչպես «1», այնպես էլ, և ավելի հաճախ՝ «2» ցուցիչ ունեցող լուծմունքներով: Դա կարող է նշանակել, որ ՄՄ № 2595-ում զետեղված լուծմունքները նույնպես հավաքվել են տարրեր աղբյուրներից:

- ՄՄ № 1480-ի «փիլոնյան» լուծմունքների հավաքածուի բաղկացությունը միանգամայն նույնանում է ՄՄ № 1053 և 2059 ժողովածուների բաղկացությանը, տեղերով են փոխվում միայն *N2* – *C* և *L2D* – *K* խմբերը: Այս տեղափոխությունը կարելի է բացատրել նրանով, որ ժողովածուի կազմով ցանկացել է միավորել *QG* առաջին երեք գրքերին և *QG IV* («Երեւեցաւ») գրքին նվիրված լուծմունքները: *Prov* և *Anit* երկերին վերաբերող լուծմունքները ՄՄ № 1480 և 2595 ձեռագրերում Գ. Գրիգորյանի կողմից նույնացվել են թերեւս այն պատճառով, որ նա չէր տարրերում լուծմունքների նախադրությունները (և), որոնք իրոք նույնն են, բռն լուծմունքների բնագրերից:

- Ուշագրության չեն արժանացել լուծմունքներ ՄՄ № 2379 (*M3 N3*) և հատկապես՝ ՄՄ № 1672 (*A3 B3 F1*) մատյաններում: Մինչդեռ *A3* լուծ-

¹⁰⁹ Մեզ հետաքրքրող լուծմունքների երկու խմբերի միջև զետեղված են այլ, Փիլոնի գործերի հետ չառնչվող բնագրեր, առաջին և երկրորդ խմբերի բնդորինակությունները կատարված են երկու տարրեր ձեռագրերով:

մունքի նախադրությունը, որը «պատճառների» հավաքածուներում զետեղված է որպես առանձին միավոր Միսիթար Գոշի անվան տակ, այստեղ լուծմունքից ոչ մի կերպ չի զատվում, դրա հետ մեկ միասնություն է կազմում: Դա թույլ է տալիս ենթադրելու, որ այս լուծմունքը, ինչպես և դրա հետ ցայտուն ոճական միասնականություն դրսւորող՝ ժողովածուի բոլոր մասցած լուծմունքները¹¹⁰ դրի է առնվել հռչակավոր վարդապետի լսարանում:

Զեռագրերում գտնվում է նաև «Առաջաբանութիւն Փիլոնի» լուծմունքը՝ հատուկենտ նեցուկ բառերից և արտահայտություններից բաղկացած համառոտ մեկնությունը, որը համընթաց է Փիլոնի բոլոր հայերեն թարգմանված երկերին: Այս լուծմունքը պարունակող ամենաշին օրինակը՝ Երուսաղեմի № 1288 (1273թ.) ձեռագիրը, ընդօրինակվել է Գետիկում, գրիչն ու ստացողը՝ Միսիթարն է, վարդապետ Հովհաննի, եւ, միջնորդաբար՝ վարդապետ Վանականի աշակերտը¹¹¹: Բնադիրն ունի երկու խմբագրություն.

Սկիզբ. [Հարցումն]. Յորում՝ կատարեցաւ Փիլոն: [Պատասխանի]. Պոռիսորոն ի Պատմոս ի Զահաւոր քաղաքի յիշէր, եթէ Փիլոն ասէ զ Յոհաննէս. Զի՞նչ է Աստուած...

Վերջ. ... եւ ապա յերեք յԵրոպիա, ի Լիբիա, եւ յԱսիա. եւ զԵփիպտոս երբեմն յԱսիա գրեն:

ՄՄ № 437, թղ. 122թ-124ա, ՄՄ № 598, թղ. 11ա-19թ:

բ) Երկրորդ խմբագրություն.

Սկիզբ. [Հարցումն]. Յորում՝ կատարեցաւ Փիլոն: [Պատասխանի]. Պոռիսորոն ի Պատմոս ի Զահաւոր քաղաքի յիշէր, եթէ Փիլոն ասէ զ Յոհաննէս. Զի՞նչ է Աստուած...

Վերջ. ... որպէս պիհոռնացիքն, որք ասէին, թէ տապանն այն չափովն չէր լեալ:

ՄՄ № 1919, թղ. 122ա-128ա, ՄՄ № 1843 թղ. 112թ-120ա:

Նույն մեկնության հատակորը առկա է ՄՄ № 1480, թղ. 574թ:

«Առաջաբանութիւն Փիլոնի» լուծմունքի ծագման վերաբերյալ որոշ ենթադրություններ հուշում են ինչպես դրա հնադրույն օրինակի ստեղծման տեղն ու որոշ այլ պարագաները, այնպես էլ վարդապետ Վանականին խիստ նման ոճը: Ուշագրավ է նաև այն հանդամանքը, որ մեկնության բնագրում առկա է «Նոննոսի ժողովարանք պատմութեանց առասպելացն, զոր յիշատակեաց Գրիգոր Աստուածաբան»¹¹² ժողովածուից վերցված «Յաղագս ճային եւ թեւոց հաւաքման» առակը: Ավելին, նույն ժողովածուն ուղեկցում է «Առաջաբանութիւն Փիլոնի» լուծմունքը վերոհիշյալ ՄՄ № 598 ձեռագրում¹¹³: Բանն այն է, որ Վանականի և նրա սաների՝ Նոննոսի ժողովածուի հետ ծանոթ լինելու փաստը հաստատվում է այն բանով, որ «Ժողովարանքի» մի օրինակը գտնվում է հնագույն՝ Փիլոնի Prov և Anit թարգմանությունները պարունակող մատյանում, որը նույնպես ստեղծվել

¹¹⁰ F1 լուծմունքը ամբողջությամբ նմանվում է «պատճառին»:

¹¹¹ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ գար, կազմեց Ա. Ս. Մաթևոսյան. Երևան, 1984, էջ 435-437:

¹¹² H. M a n a d i a n. Die Scholien zu fünf Reden des Gregor von Nazianz. - Zeitschrift für armenische Philologie. Marburg, 1902, SS. 220-272, bes. S. 267:

¹¹³ Երկու ձեռագրերն էլ գործածվել են Հ. Մաթևոսյանի կողմից վերոբերյալ բնագրի հրապարակման համար:

է Վանականի դպրոցում (*ՄՄ* № 2101, գրիչ՝ Ստեփաննոս Ախթամարցի): Հուծմունքի՝ վարդապետ Վանականին կամ նրա աշակերտներից մեկին¹¹⁴ պատկանելու մասին թերևս խոսում է նաև այն վաստոր, որ և՝ «Առաջաբանութիւն»-ում, և՝ Միքայել Ասորու «Ժամանակագրության» հայերեն թարգմանության խմբագրություններից մեկում¹¹⁵ հայտնաբերվում է Փիլոնի՝ Հովհաննես առաքյալի կողմից մկրտվելու մասին առասպելը¹¹⁶. մինչդեռ հայտնի է, որ «Ժամանակագրության» թարգմանության վերամշակումը ստեղծվել է վարդապետ Վանականի ամենամտերիմ աշակերտներից մեկի, Վարդան Արեկելցու մասնակցությամբ¹¹⁷:

Փիլոնի երկերին նվիրված վերլուծագրությունը մեզ, հավանաբար, իր ամբողջ ծավալով չի հասել: Դա է վկայում երկանյան երկու ուշ դարաշրջանի մատյաններում (*ՄՄ* № 3506 (1615թ., Լվով, գրիչ՝ Զատիկի Պողտանի, թղ. 93թ.-94ա) և № 6354 (XVI-XVII դգ., թղ. 263թ) գտնվող անհայտ լուծմունքի պատառիկը՝ «Առասպել զոր ասեն ի հինն. զոր յիշէ Փիլոն»: Թերևս նոր գյուտերի շնորհիվ կհաջողվի պարզել, թե որ լուծմունքին է պատկանում ստորև բերվող հատակտորը.

«Պասիփա ոմն դուստր Արեգականն. կին չը սա Մէնովա թագաւորին Փիլոնիկեցւոց. ի ցլու հարաւ. եւ յայտնեաց զախտն Ենելեղա առն հիւսան ճարտարի. եւ նա արուեստիւ արար զկամն¹¹⁸ կողչն. եւ ասեն որդի¹¹⁹ ծնանել. ուստի եւ ազգն Ելենացւոց եւ Լակեգոնացցց զգաստացան. Սողոն օրէնս եղ Աթենացւոցն. զպունկորդին չընդունել ի ժառանգութիւն:

Ղիկուդորում¹²⁰ օրէնս եղ Լակեդոմնացց¹²¹. զպունկորդին չհրամայեաց թաղել: Զի որ շնա, մեկ որ զպատուիրանն արհամարհեաց. եւ երկու. որ¹²² զԱստուած թշնամեաց¹²³. երեք՝ պղծեաց զտաճարն Աստուծոյ. չորս՝ յարոյց զպունկորդիս յօտար զաւակէ. եւ եարկ

¹¹⁴ Տե՛ս Հ. Ո ս կ ե ա ն. Յովհաննես Վանական վարդապետ եւ իւր դպրոցը. Վիեննա, 1922:

¹¹⁵ Տեառն Միքայելի Պատրիարքի Ասորու ժամանակագրութիւն. Երուսալէմ, 1871, էջ 109: Ասորերեն բնագրում, որից թարգմանվել է Հուշարձանը, այս դրվագը բացակայում է (հմմտ. Chronique de Michel le Syrien, patriarche jacobite d'Antioche (1166-1199), ed. par J.-B. Shabot. T. I, Paris, 1899 (1963), p.157):

¹¹⁶ Այս սյուժեն ծագել է «Վարք առաքելոյն Յովհաննու» պարականոն գրքից (Թանգարան Հայկական հին եւ նոր դպրութեանց. Գ. Անկանոն գիրք Առաքելականք, Վենետիկ, 1904, էջ 262-263) և, ամենայն հավանականությամբ, տարածված է եղել միայն Հայ միջնադարյան դպրոցական բանահյուսության մեջ, թեև համընդհանուր ճանաչում չի գտել (Օ. Վարձաքայ Փիլոնի և Փիլոն Ալեքսանդրացու նույնացման Հնարավորությունը տալիս է միդին Հայերեն բնագիրը. Հունարեն խմբագրության մեջ այս անձնավորությունը մեկնում է Սուէրք Գիրքը «Ըստ տառիք» (տե՛ս T h. Z a h n. Acta Ioannis. Erlangen, 1880, SS. LIV, 110): մի հասկանիչ, որ ոչ մի կերպ չէր կարող վերագրված լինել այլարանական մեկնողական մեթոդի դասական՝ Փիլոն Ալեքսանդրացուն:

¹¹⁷ Այս փաստին վերաբերող տվյալները տե՛ս Տեառն Միքայելի Պատրիարքի Ասորու ժամանակագրութիւն. Երուսաղեմ, 1870, էջ 608-622:

¹¹⁸ ՄՄ №6354 զկամս:

¹¹⁹ ՄՄ №6354 որդիս:

¹²⁰ ՄՄ № 6354 Կիուրդոս:

¹²¹ ՄՄ № 6354 Լակիդոմնացց:

¹²² ՄՄ № 3506 չիք:

¹²³ ՄՄ № 6354 թշնամանեաց:

անջինչ քէն ի սուրբ ամուսնութիւն: Հինգ՝ որ¹²⁴ ուսոյց առն զրիւր չարիս. վեց՝ որ¹²⁵ յարոյց նախանձ սպանման ի վերա սիղեխոյն¹²⁶. Եօթն՝ զի եւ կարծիս տա հարազատ մանկանցն:

Ավրոդիտէս, զպոռնկութիւնն բազմացոյց: Ապողոն. զարանց սպանումն. Արտէմիս՝ զկանանց սպանումն¹²⁷. Հէրմես՝ դողոց դարան. Պասիփա՝ անկարդ խառնակութիւն:

Մովսես եղ օրէնս խիստ: Քահանայապետին. տարեւորական պահք. Քահանայիցն՝ շաբաթուք. Ուխտաւորացն՝ թրւական աւուրք. Աստուած ժողովուրդն առ ստորոտս լերինն զերիս աւուրս. այս հնոյն աւանդութիւն»¹²⁸:

Հուսով ենք, որ սույն հոգֆածում հրապարակված փիլոնյան լուծմունքների մատենագրությունը կնպաստի այս կամ այն լուծմունքը ճշգրիտ սահմանելուն, և հատկապես կհեշտացնի արտասահմանյան ձեռագրապահոցներում գտնվող նյութի նկարագրությունը:

АРМЯНСКИЕ СХОЛИИ К ПРОИЗВЕДЕНИЯМ ФИЛОНА АЛЕКСАНДРИЙСКОГО

ОЛЬГА ВАРДАЗАРЯН

Р е з ю м е

В статье предпринята попытка систематического описания созданных в XII – XIII вв. схолий к армянским переводам произведений Филона; введенные автором обозначения (сиглы) могут быть использованы для более строгого и компактного представления аналогичных материалов зарубежных древлехранящих. Показывается несостоятельность атрибуций крупных схолий, предложенных Г. Григоряном: схолии не составляют двух сборников и не принадлежат Ованнесу Саркавагу и Ованнесу Ерзникаси Плзу соответственно. Высказывается предположение о создании схолии "Предисловие к Филону" в двух ее редакциях в школе Варданета Ванакана, а также о принадлежности цикла схолий в кодексе Ереванского Матенадарана № 1672 школе Мхитара Гоша.

THE ARMENIAN SCHOLIA TO THE WORKS BY PHILO OF ALEXANDRIA

OLGA VARDAZARYAN

S u m m a r y

The article is a systematic description of the Armenian medieval scholia (the 12th – the 13th cent.) to the Armenian translations of several genuine and non-genuine works by Philo of

¹²⁴ ՄՄ № 3506 չիք:

¹²⁵ ՄՄ № 3506 չիք:

¹²⁶ ՄՄ № 6354 սիղեխոյն:

¹²⁷ ՄՄ № 3506 չիք:

¹²⁸ Վերջին պարբերությունը ՄՄ № 6354-ում բացակայում է:

Alexandria. The sigla, used in the present description, may be applied for more precise and compact introduction of the same material, preserved in foreign collections of Armenian manuscripts. The failure of attributions of large scholia, offered by G. Grigoryan, is demonstrated: they cannot be taken as two different compositions by Hovhannes Sarkavag and Hovhannes Yerznkatsi Pluz respectively. It is supposed, that two recensions of the scholium "Preface to Philo" have been originated in the school of Vardapet Vanakan; also the series of scholia in the codex of the Yerevan Matenadaran № 1672 may be ascribed to the school of Mxit'ar Gosh.